

Վանաձորում կանգնեցվել է գորավար Անդրանիկի առաջին բրոնզաձուլյա հուշարձանը

Համաժողովրդական նվիրատվություններով, «Բնտերկապ» բարեգործական կենտրոնի շնորհիվ 24-ի նախաձեռնությամբ և Վանաձորի քաղաքապետարանի աջակցությամբ Վանաձորում կանգնեցվել է գորավար Անդրանիկի առաջին բրոնզաձուլյա հուշարձանը:

«Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ Լիբանանի «ՍՓՅՈՒՌ» հրատարակության ազգագրի թղթակիցը միջոցառման մասին գրուցել է նվիրատուների և նախաձեռնող խմբի անդամների հետ:

Հայ առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ արքեպիսկոպոս Գուլյանը նշել է, որ հայ հավատացյալ ժողովրդի համար գորավարի կերպարը ընկալվում է որպես քաջության, իմաստության և հայրենապաշտության խորհրդանիշ: «Նա գորավար է ողջ երկրամբ, որը մշտապես փայլատակում է հայոց ազատագրական պայքարի պատմության էջերում: Սերունդներ են կրթվել ու ոգեշնչվել նրա հաղթանակներով: Նրա ազգային նկարագիրը համախմբել ու նորանոր պայքարների, հաղթանակների է առաջնորդել քաջարի հայորդիներին», – ասել է առաջնորդը:

Նրա խոսքով՝ հայկական յուրաքանչյուր օջախում տիրոջ՝ երկնավոր փրկչի Քրիստոսի պատկերից գատ մշտապես պահպանվել է գորավարի պատկերը, իբրև հայրենյաց փրկչի, իբրև քաջ գորավարի, իբրև հայդուկապետի, քանզի այն գորություն է հաղորդում, քանզի այն օգնել է և օգնելու է մեզ, որպեսզի չշեղվենք մեր ինքնությունից, որի հոգևոր հիմքերը դրել են սուրբ Վարդանանք, սուրբ Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը: «Անդրանիկ գորավարը հատկապես երիտասարդ սերունդին պատգամում է, որ տեր կանգնեն պետականությանը, քանզի այն մեր ինքնության առհավատյան է, իսկ հայ զինվորը ու զինական ուժը մեր գոյության գրավականը: Անդրանիկի գործը մեր բոլորիս գործն է, այն արդար է ու հաղթական: Մենք պիտի գորացնենք մեր ներկա պետականությունն ու վերադարձնենք մեր կորուսյալ հայրենիքը: Անդրանիկը ցմահ անհաշտ մնաց հայի հոգում օտարի տիրապետության հետ, ցմահ պայքարեց հայրենի հողի ազատագրման համար, տասնյակ հազարավոր գաղթականներ ու որբեր փրկեց, որպեսզի հարատևի հայկազյան ազգը», – ասել է արքեպիսկոպոսն ու հավելել, որ երախտագիտությունն է հայտնել քանդակագործին, ճարտարապետին, շինարարներին, վարպետներին և նախաձեռնողներին:

Ե. Զարեցի անվան Գրականության և արվեստի թանգարանի տնօրեն Կարո Վարդանյան էլ ընդգծել է, որ Անդրանիկի դյուցազնական կերպարը համահայկական է ու համազգային, բայց հայոց ամեն տարածաշրջանն ունի իր Անդրանիկը: «Այդպիսի մի տարածաշրջան էլ գեղատեսիլ Լոռին է, որի լեռներում ու հովիտներում գորավարը թողեց իր չարչարված հոգու մի նշանակալի մասը: Լոռեցին հպարտ է իր բաժին Անդրանիկին, հպարտ է այն սիրով ու շքամությամբ, որ տաճում էր գորավարը այս բնաշխարհի և նրա քաջարի ժողովրդի հանդեպ: Լոռեցին հպարտ է այն իրողությամբ, որ գորավարի մեծարանքին ու ակնածանքին արժանացած սակավ անձանցից ամենաառաջնայինը մեծանուն Նովհաննես Թուրանյանն էր: Մեր ժողովրդի այս երկու երեկների հոգևոր եղբայրությունն ու հարազատությունը համագործինակ չունեն անցյալում, չունեցավ նաև հետագայում», – ասել է Վարդանյանը:

Նա նշել է, որ մեծանուն լոռեցիների անդրանիկամեծարությունը անխաթար կերպով փոխանցվել է հետնորդներին, այդ թվում՝ «ԻՆՏԵՐԿԱՊ» բարեգործական միությանն ու նրա շուրջ համախմբված մարդկանց, որոնց ջանքերի շնորհիվ էլ Վանաձորն ունեցավ Զորավարի արձանը:

Խոսելով հուշարձանի կառուցման պատմական նշանակության մասին՝ Վանաձորի պետական համալսարանի պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ֆելիքս Մովսիսյանը նշել է, որ Վանաձորում ասպետական գորավարի արձանը տեղադրելու գաղափարը գալիս է 1990 թվականից, երբ քաղաքի գլխավոր փողոցներից մեկը կոչվեց գորավար Անդրանիկի անունով և որոշվեց տեղադրել նրա արձանը:

«Անցան տարիներ, բայց այդ անտիպացումը կյանքի կոչվեց մի շարք պատճառներով: Այն, ինչ անցած մոտ երեսուն տարվա ընթացքում չարեցին, հաջողվեց իրականացնել «ԻՆՏԵՐԿԱՊ» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ: Կենտրոնի հիմնադիր Նորայր Զուլյանը Վանաձորում հայտնի էր բարեգործական բազմաթիվ գործերով: Երկար տարիներ անձամբ մոտիկից ձանաչելով նրան, տեղյակ եմ նրա գործունեությանը,



որն արժանի է միայն դրվատանքի և ամենայն հարգանքի: 1990-ական թվականների սոցիալական ծանր պայմաններում, իր անձնական կապերի շնորհիվ, նա եվրոպական երկրներից բազմաթիվ օգնություններ բերեց և հատկացրեց սոցիալապես անապահով հազարավոր մարդկանց, կրթական օջախներին ու բուժօգնություններին՝ աղետի գոտում ու Արցախում և ամենուր նրան այսօր էլ հիշում են երախտագիտությամբ: Իսկ որպես արձանի կառուցման նախաձեռնող խմբի անդամ տեղյակ եմ, թե ինչպիսի դժվարություններ հաղթահարեց, որքան ջանք, եռանդ ու նվիրում դրսևորեց այս հիրավի հայրենակեր գործը գլուխ բերելու համար», – պատմել է նա:

ՀԱՄԱՅ Վանաձորի մասնաճյուղի ավագ դասախոս, պատմաբան Ռուբեն Պարսամյանը հիշել է, որ տարբեր առիթներով, ուսանողության, թե այլ հանրույթների հետ շփվելով մշտապես շեշտել ու շեշտելու է այն հիմնարար դրույթը, որ մեզ հարկավոր է հենվել մեր պատմության վեհություն և հզորություն հաղորդող ազգայնների վրա, նման մոտեցումը անհրաժեշտ է առկա մարտահրավերներին դիմակայելու և հետագա ազգային ընթացքը սնելու համար: «Այդ իսկ առումով այնպիսի վեհատեսիլ ու հաղթական անհատ, ինչպիսին Զորավար Անդրանիկն է, մեր համար եղել է ու կմնա դրական ազդակ, կմնա անմար փառոս: Ու երբ գլուխներս բարձին դնելուց առաջ ամեն անգամ նրա պես հաշվետու լինենք ինքներս մեզ, թե ինչ ենք արել այդ օրը երկրի ու ժողովրդի համար, ըստ այդմ էլ, անկասկած, հաղթական կլինի մեր երթը: Պատասխանեն դասական մոտեցումներ. անցյալի ուսումնասիրությունը մեզ հարկավոր է ներկան հասկանալու և ապագայում կողմնորոշվելու համար: Ներկա բարդ աշխարհաքաղաքական իրողությունների պայմաններում (Արցախյան հիմնահարց, Միջինկական պատերազմ), երբ մեր պատմության ընթացքն է դառնում ոչ բարեկամ ուժերի և երկրների կողմից հարձակման առարկա, Անդրանիկի կերպարը, կյանքն ու գործը պիտի օգնեն մեր երկրին, առանձնապես երիտասարդությանը համախմբվելու և կազմակերպված հակահարված տալու մեր ինքնության դեմ ոտնձգություն կատարողներին, մեր պատմությունը խեղաթյուրողներին: Զորավարի գործը պիտի շարունակվի նաև գաղափարական ճակատամարտերում», – շեշտել է պատմաբանը:

Քանդակի հեղինակ Գեղամ Բեգջանյան էլ խոստովանել է, որ երբ իրեն առաջարկել են ձուլել արձանը, մեծ ոգևորություն է ապրել:

«Անչափ շնորհակալ եմ Նախաձեռնող խմբի բոլոր անդամներին գլխավորության համար: Նրանք շատ օգնեցին պատմական գրականությամբ, որը օգնեց ինձ խորապես ճանաչելու գորավարի կերպարը: Գաղափարը իրականացնելու համար շուրջ մեկ տարի չարչարվեցի, որ գոյություն ունեցող դասական արձաններից տարբերվի, ընկալվի որպես մեծ հայի հաղթանակող կերպարն ու գաղափարը: Անդրանիկը հայոց սրբազան հողի ու ժայռերի ծնունդ է և սատու է: Թուրք պատյանից կիսով չափ հանած վիճակը արդեն պատգամ է՝ ներկա ու գալիք սերունդներին, որ

գորավարի գործը կիսատ չթողեն և ազատագրեն մեր հայրենական տարածքները: Շատ ուրախ եմ, որ արձանը լավ ընդունվեց հանրության մեծամասնության կողմից, դա ինձ պարտավորեցնում և ոգևորում է ստեղծելու նոր գործեր», – անկեղծորեն նշել է նա:

«ԼՈՐՈՒՄ ՄԱՐԶ» մարզային լրագրի գլխավոր խմբագիր, բանաստեղծ Մանվել Միկոյան էլ շեշտել է, որ ձեռնարկում աննախադեպ էր և սպասելի, քանի որ համաժողովրդական սերը հայ ժողովրդի լեզենդար գավակի հանդեպ խոր արմատներ ունի և ժամանակներն անգոր են, այն հնարավոր չէ ջնջել կամ թաղել մոռացության փողով տակ:

«Համոզված եմ, որ արձանի կառուցմամբ մեր քաղաքը լավ նվեր ստացավ, հուշարձանը և շրջակա փողոցի պուրակը, որպես համաքաղաքային հանգստյան գոտու մի հատված, ազգային և համաքաղաքային տոներին իր դերը կունենա միջոցառումներն ավելի բովանդակալից դարձնելու տեսակետից: Մեր համաքաղաքացիները, հատկապես նոր կյանք մտնող սերունդը, աշակերտներն ու ապագա զինվորներն ստացան ռազմահայրենասիրական, առհասարակ ազգային ոգով դաստիարակվելու ուղղված լուսավոր մի վայր ու կերպար: Ձորավարի կյանքն ու գործը մշտապես ուղեկցել են հայությանը վերջին հայրության և ուղեկցելու են այսուհետ մինչև մեր ազգային նպատակների լիակատար իրականացում: Մենք ու եկող սերունդները պարտավոր ենք, զինվորագրվելով անդրանիկյան ուխտին, շարունակել այն գործը, որն է՝ Արևմտյան Հայաստանի ազատագրության: Դրա համար է արձանի՝ Ձորավարի սուրբ պատյանից կիսով դուրս ելած: Հետևեք մեծն հայդուկալետի, ռազմիկի ու զորավարի պատգամներին և մշտապես հաշիվ տանք մեզ մեր ամենօրյա գործերում», – եզրափակել է բանաստեղծը:

Վանաձորի թիվ 1 դպրոցի զինղեկ, փոխգնդապետ, արցախյան ազատամարտի վետերան և «ԻՆՏԵՐԿԱՊ» ՀԿ-ի փոխնախագահ Արկադի Մարտիրոսյանը շատ գնահատելի է համարել, որ կառուցումն իրականացավ համաժողովրդական նվիրատվություններով, որին մասնակցեցին, աշխարհի բոլոր ծայրերում ապրող հայեր, անգամ օտարերկրացիներ, ինչպես Բուլղարիայի Պաշտպանության նախարարությունը՝ ՀՀ-ում Բուլղարիայի դեսպանության միջնորդությամբ, ԱՄՆ-ում Նիկարագուայի հոգևոր առաջնորդ Արիել Օրբեգոնը և գերմանաբնակ եզդի բարեկամ Մուրեն Խանոյանը: «Հուզվեցի հատկապես Վանաձորի թիվ 2 դպրոցի 8-ամյա Գայանե Ղարաբեկյանի վերաբերմունքից, ով արտասահմանում, վաճառելով իր ստեղծած հուշարձանի ջրանկարի ողջ հասույթը՝ 200 ԱՄՆ դոլար, հատկացրել էր արձանի կառուցմանը: Այս մասին ես հաճախ եմ պատմում ռազմագիտություն առարկայի պարապմունքներին մասնակցող աշակերտներին: Երանեմք մեզ քիչ չեն պատանի երկրպագի դառնալ ցանկացողները, ծրագրում ենք օժանդակ արտադրությունները կազմակերպել զորավարի հուշարձանի մոտ», – նշել է նա:

«ՎԱՆ ԱՐՅԱՆ» հրատարակության տնօրեն, գրող, հրապարակախոս, Վիպյան Պողոսյանը Անդրանիկ զորավարին իր ժողովրդի պես է համարել ու նշել, որ նա հազարամյակների եղելություն է: «Մեկ մարդու մեջ խտացված է ամբողջ մի ըմբոստ ազգի կենսագրություն: Այս հենց այսպես թեև լույս աշխարհ է եկել 1865 թ-ին, սակայն ինչպես Մասնա ծուռ Դավիթն է իր ժողովրդի իսկաբնական կերպերի խտացումը, այնպես էլ Անդրանիկը, մի էական, շատ էական գուգաղիպությամբ, որ եթե 1000 տարի առաջ ծնված լինեք, պետք է նրա նախատիպը լինեք: Այս իմաստով մեծ հայր մեր նոր սերնդին անհրաժեշտ է, որ այլևս ոչ մի ոտխա չկարողանա մեր տեսակին սպառնալ ու հայրենագրել», – ասել է նա ու համոզմունք հայտնել, որ Անդրանիկի բրոնզաձուլ արձանը իր տարածքով, անշուշտ, կդառնա վանաձորցիների սիրված ու պաշտելի վայրերից մեկը:

Գրող, հրապարակախոս, անդրանիկագետ Ռուբեն Սիմոնյանը, խոսելով զորավարի սիրաբնքների մասին, նշել է, որ Մարդաբանական և Բաշ-Ապարանի հերոսամարտերից շուրջ մեկ ամիս առաջ 1918-ի ապրիլին, Միքիլից եկած արևմտահայ 210 ռազմագերիների երթային վաշտի հիմքի վրա ձևավորված իր հայկական առանձին հարվածող զորամասով, Անդրանիկն առաջին է Առցիքի սարահարթում բազմօրյա ծանր կռիվների մեջ մտել թուրքերի նախահարձակ գործերի հետ անթերի կատարելով հայկական կորպուսի հրամանատար Թովմա Նազարբեկյանի մարտական հրահանգը: «Միայն Ալեքսանդրապոլի (այժմ Գյումրի) անկումից հետո (15 մայիսի), շրջապատումից խուսափելու համար Անդրանիկն իր գործը և օրեցօր բազմապատկվող գաղթականներով նահանջում է Լոռու սարահարթ: Հակառակորդը, թարմ ուժերով համալրված,

շարունակում է կատաղի հարձակումը: Հայկական առանձին հարվածող զորամասը, թուրքերի գերակշռող ուժերին երկու օր Ջալալօղլիում (այժմ Ստեփանավան) ճակատամարտ տալուց հետո, նորից կանգնում է շրջապատման փաստի առաջ և մայիսի 23-ին գաղթականների հետ անցնում Դսեղ: Այստեղ ազգային հերոսը հանդիպում է իր սրտակից եղբորը՝ Ամենայն Հայոց Բանաստեղծ Հովհաննես Թումանյանին: Ձորավարը կորպուսի հրամանատարից առաջադրանք է ստանում ամեն գնով պահել Դեբեդի ձորով անցնող երկաթգիծը, որով դեպի Թիֆլիս և Բաքու էր ձգվում հակառակորդը», – պատմել է նա ու հավելել, որ Դսեղում դիրքավորված Անդրանիկն իր գործով նաև անգործության է մատնում Ձորագետի հովիտ մտած թուրքական զորախմբին, որ չի կարողանում մասնակցել Լարաքիլիսայի ճակատամարտին, ավելին, մեծահամբավ հայ զորավարի ահից գալված են ժամու Լոռու և Բորչալուի (այժմ՝ Մարնեուլի) վատահամբավ թուրքերը, որոնց հետախույզները վիստում էին մոտակա անտառներում:

«Լարաքիլիսայի անկումից հետո, երբ շրջապատման նոր վտանգ էր առաջացել, Անդրանիկը Գուգարաց լեռներով գործի և գաղթականների հետ անցնում է Դիլիջան: Այստեղ նա ստանում է Բաթումի պայմանագրի օրինակը, որով վավերացված էր Հայաստանի Հանրապետության ճանաչման փաստը: Սակայն այդ փաստաթուղթը թողնում է նաև ծանր տպավորություն: Հայաստանը 10 000 քառ. կիլոմետր տարածության վրա սահմանափակվում էր Երևանի շուրջ, հոգուտ թուրքերի և ադրբեջանցիների պնկվում էին Շիրակը, Լոռին, Կարսը, Իգդիրը, Նախիջևանը, Սյունիքն ու Լարաբաղը: Սպալակույտի խորհրդակցությունում որոշվում է չեղարկվել պայմանագրի պահանջներին: Կարելի է ասել, որ միայն Աստու կամոք Անդրանիկյանները 1918-ի ամռանը հայտնվում են Բաթումի պայմանագրով Հայաստանի սահմաններից դուրս ժառանգ հայոց պատմական Սյունիքում: Դա ճիշտ այն ժամանակ էր, երբ իրենց դրուստան տեղ կարծող թուրքերը, գործեր կուտակելով Նախիջևանում, ձգտում էին Շահբազ-Սիսիան-Գորիս-Շուշի ճանապարհով մարտական կապ հաստատել Ադրբեջանի հետ», – նշել է գրողը:

Նրա խոսքով՝ թշնամու մտադրության իրականացման դեպքում նախճիքի կենթարկվել Սյունիքի հայությունը արժանանալով մեր եղեռնագրված նահանգների ճակատագրին: «Պետական օգնությունից զրկված Անդրանիկն աներևակայելի ջանքերով կազմակերպեց երկրամասի ինքնապաշտպանությունը, լեռնացվալ և անհաղթահարելի արգելք դարձավ թուրքերի ճանապարհին: Այսպես՝ փրկվեցին շուրջ 80 000 այսուկցիները, 35 000 գաղթականները, և Սյունիքը պաշտպանվեց ու պահպանվեց որպես Հայաստանի անբաժանելի մաս: Հայոց հերոսապետն իր քաջարի զինվորների զենքերով ու կամքով վերախմբագրեց Բաթումի պայմանագիրը՝ հոգու հայրենիքի: Փաստորեն հայկական նորաստեղծ պետության համար Ձորավար Անդրանիկը սկսեց հողահավաքը, պահպանեց՝ սեպի պես թուրքականության սիրտը խրված երկրամասը, որով այսօր նորանկախ Հայաստանը սահման ունի իր հին հարևանի Իրանի Իսլամական Հանրապետության հետ», – եզրափակել է Սիմոնյանը:

Վանաձորի փոխքաղաքապետ, պատմական գիտությունների թեկնածու Արման Բեռնեցյան էլ հպարտությամբ նշել է, որ զորավար Անդրանիկի արձանի կառուցումը Վանաձորի պատմության կարևոր էջերից է: «Կարծում եմ՝ ապագա սերունդները դա ևս կգնահատեն: Մենք ըստ ամենայնի աջակցեցինք «ԻՆՏԵՐԿԱՊ» ՀԿ-ին և լոռեցի երիտասարդ քանդակագործին, համոզված, որ մշակութային, հայրենասիրական դաստիարակության խորացման, մեր քաղաքի գեղագիտական տեսքը պարզեցնելու առումներով հիմնարար քայլ ենք արել: Ազգային-հայրենասիրական պայքարի ոգին թե՛ պահելը անանց, մշտական ուշադրություն պահանջող և ամրապնդման անհրաժեշտություն ունեցող հիմնախնդիր է: Ուշացված է, բայց ոչ ուշ, պատմության դասագրքերում ուրույն տեղ հատկացվի Մեծն Ձորավարի հերոսապատմանը: Բսկ ավելի լավ ձև ու բովանդակություն, քան մեր համայնքում մեծ հայի հուշարձանի կանգնեցումն ու նրա անդուլ հայաշահ գործի հանրահռչակում, կարծում եմ, դժվար է տեսնել: Ձորավար Անդրանիկի գործը շարունակելը բոլորիս սրբազան պարտքն է ու դա ևս, որպես պատմաբան և մանկավարժ, արդեն ուղղում եմ ներկայի ու գալիքի բոլոր սերունդներին: Մովորենք Անդրանիկից և գնանք դեպի նա», – եզրափակել է նա:

Վանաձորի տիկնիկային թատրոնի տնօրեն, ռեժիսոր Սերգեյ Մելիքյանը միանշանակ ասել է, որ մեծ ցանկությամբ և ուրախությամբ է մասնակցել արձանի կառուցման բոլոր

ԳՈՐԾՆ Ե ԱՆՄԱՅ

Մեր կյանքի լույսն ու ստվերը

Ամեն քաղաք քաղաք է իր քաղաքացիներով: Բայց քաղաքի ամեն բնակիչ չէ, ում լիասիրտ քաղաքացի կանվանեն: Մեկը, տեսնում ես, պաշտում է իր ոստանը, մի շուրջ է ավելացնում, իր լուսան ներդնում ընդհանուր ներդաշնակության ապահովման գործում: Ցավոք, կան նաև այնպիսիք, որոնց համար մեկ է կրակ լինի, թե հեղեղ, միայն իրենք ապահով բարձունքում լինեն, միայն ուրիշի շուրջին հասնեն, ուրիշի լուսան ճարակորեն թողնեն: Բանաստեղծը դիպուկ է բնութագրել. «Մարդ կա՝ աշխարհն է շալակած տանում, մարդ կա ելել է շալակն աշխարհի»: Բոլորը գիտեն մյուս հանճարի հանճարեղ ատույթը՝ «Գործն է անմահ...»: Այո, ամեն ինչ հիշվում է: Մարդու մասին դատում են գործերով: Ստորև բերվող օրինակներով ընթերցողին ենթ թողնում մարդու լավ ու վատի մասին իր եզրակացությունն անել:

Վարձատրությունը՝ բարի գործը

Դիմաց թաղամասում բարձրադիր ժայռի վրա 35 տարի առաջ կառուցված «Կիրովական» հյուրանոցի մոտից Վարդանանց պողոտա ուղծվ կարելի է հասնել ընդամենը 4-5 րոպեում՝ շնորհիվ բազմաբազմա, լուսավորվող, բազմաթիվ աստիճաններ ունեցող անցուղու: Անցուղին, իրոք, գեղեցիկ է, անցնում է նաև արհեստական լճակի վրայով, ներդաշն է տեղանքին, ուղարկալույս տեսքով վաղուց զարդն է դարձել գաղիթափի, քաղաքի: Այն ժամանակվա քաղաքային իշխանությունների ողջախոհության շնորհիվ անցուղին նախագծվեց և նվիրվեց մեզ՝ հյուրանոցի կառուցումից ամիսներ անց: Հետո երբեք չի նորոգվել: Եվ մենք կորցնում էինք: Ժամանակի իր հետքը բավականին «լավ» էր թողել, բոլորիս աչքի առջև շատ աստիճաններ իրարից հեռացել, փլուզվել ու փլուզվում էին, բազմաթիվ ժանգոտել, ընկնում էին, ասֆալտե ծածկույթի հետքը շատ տեղերում չէր երևում: Դժվարացել, վտանգավոր էր դարձել անցումը: Այսօր ուրիշ է: Անցուղին մեզ է ներկայանում նորոգ ու ջահել, վտանգ անցած է, անցուղին՝ փրկված: Որովհետև գտնվեց մեկը, ով միայն խոսքերով չի սիրում իր ոստանը...

Աղբակույտեր, աղբակույտեր...

Իր ոստանը սիրող մարդը չի ապականի այն: Քայլում ես անցուղուց, լճակից ոչ հեռու, Վանաձոր

գետակի ձախ ափին նկատում ես աղբակույտ: Համատարած աղբակույտով է շրջապատված նաև «Լոռի» մարզադաշտը: Էլի շատ տեղեր կան: Ոչ մի աղբակույտ ինքն իրեն չի գոյանում, դրանք հեղինակներ ունեն: Նրանք հեռուներում չեն: Առաջինը հարևանն է ավտոսպասարկման ինչ-որ կետի, երկրորդը՝ պահածոների հայտնի արտադրամասի: Աշխատում են մարդիկ, ձեռքի հետ էլ աղբուղտեղությամբ «գարդարում» իրենց շրջակայքը: Շաբաթօրյակների եռուն օրերին կազմակերպիչները հայտարարում են, իբր թե թիրախավորել են աղբակույտերը, մաքրելու-մաքրագարողելու են բոլորը: Տեսնում ենք, ամպագոռոգո հայտարարությունները մաքրություն չեն: Այլապես շաբաթօրյակների կազմակերպիչները չէին թիրախավորվի այս էջում:

Ի վերջո, է՞րբ պետք է գործի համապատասխան օրենքը, և չնախատեսված վայրերում աղբ թափողները է՞րբ պիտի պատժվեն:

Երբ հուզավառվում ես հուզավառում է երագողը

Լճակի մյուս ափին մոտիկ՝ Ջորավար Անդրանիկի սկզբնամաս. բարեկարգված տարածք, հալ և բուլվար ժողովուրդների հերոս Անդրանիկի լեռների թիկունքից վեր հառնող բրոնզաձուլ հուշակերտ արձանը մի ուրույն հմայք ու գեղեցկություն են հաղորդում քաղաքին: Մեկ-երկու ամիս առաջ այն դեռ չկար: Ծառերի հովանու ներքո ժայռաբեկոր քարի վրա փորագրված «Այստեղ կտեղադրվի զորավար Անդրանիկի արձանը» մակագրություն-խոստումը 28 տարի համբերատար սպասում էր իր նախաձեռնողի նախաձեռնողին: Վերջապես բոլորիս մեջից առանձնացավ մեկը՝ երագողը, համարձակը, հայրենասերը: Նախ ինքը հուզավառվեց, ապա իր ամուր կալքով, պատրաստակամության, կազմակերպչական անուրանալի շնորհներով կարողացավ հուզավառել նախաձեռնող խմբի անդամներին, հարյուրավոր հայրենակիցներին, նաև աշխարհի տարբեր երկրների մարդկանց, ովքեր իրենց հանգանակություններով հնարավոր դարձրին մեկ մարդու մտքում ծագած ցանկությունը վերածել համաժողովրդական համահավաք իդեալի հաղթական կատարումի: Հրատարակված «Հուշամատյանը» պատմում է բոլոր մասնակիցների մասին: Իսկ մենք հայտնենք երագողի անունը՝ «Ինտերկապ» բարեգործականի հիմնադիր նախագահ Նորայր Ջուլյան:

Բա ասում եք՝ Աստված չկա

Ջորավար Անդրանիկի արձանից հեռու չէ Գուգարաց թեմի առաջնորդարանը: Քաղաքի այցեքարտերից մեկը համարվող այդ գոյություն կառույցում վերջերս սահասարսուտ հանցագործություն կատարվեց: Հեշտ լուսմա ձեռք բերելու մղումով՝ անհայտ հանցագործները գիշերապահակին կապկպելուց հետո մուտք են գործել առաջնորդի աշխատասենյակ և փորձել բացել չհրկիզվող պահարանը: Կեցցե՛ մետաղե արկղը. ոչ մի կերպ չի բացվում, դիմանում է «բողբոջկայի» կտտոցներին: Գողերն էլ առավոտյան կողմ քոռուփոշման ճողոպրում են անհայտություն: Իրավապահներն այդ տեղը դեռ չեն ասել: Ի՞նչ պիտի տանեին սրիկաները: Մենք չգիտենք: Գուցե այն գուժարներից, որոնցով Գուգարաց թեմում շատ տարիներ գործող հատուկ հանձնաժողովը ձեռք է բերել և անապահով, բազմազավակ ընտանիքներին նվիրել բնակարաններ: Ոչինչ չունենք ավելացնելու, բացի այն, որ առաջնորդարանի շնորհիվ բնակարանի տեր է դարձել 31 ընտանիք:

Արժանի է հարգանքի

Քաղաքի կենտրոնական հատվածում՝ Ազատամարտիկների պուրակում, մի վաճառակետ կա՝ «Կժեր» հետաքրքիր անվամբ, ուր գնորդներին հուշանվերներ, գեղարվեստական իրեր են առաջարկում: Մեզ գրավում է ոչ միայն խանութի արտաքին գեղեցկությունը: Պակաս գեղեցիկ ու խնամված չեն նաև խանութի աջ և ահյակ մասերը: Դրանցում ծառ ու ծաղիկ մեզ հնազույն, մեզ մեր ոչ վաղ անցյալը հիշեցնող, գործածությունից դուրս եկած իրերի, գործիքների, սարքավորումների հավաքածուներ են ցուցադրվում բացօթյա: Գործարարն, անշուշտ, գեղագետ է (Սամվել Առաքելյանը նկարիչ է): Նա իր քաղաքի նվիրյալն է...

Չերթական ես ամենացուն արհամարհանքը

Վերջապես հասանք քաղաքի կենտրոն՝ Հայքի հրապարակ: Այստեղ մի քանի գեղեցիկ կառույցների հետ փառավորապես շոշոռում է քաղաքապետարանի շենքը, ուր ժամանակավորապես ընտրված և քաղաքը ժամանակի մի հատված կառավարելու թույլտվություն ստացած մարդկանց քթի տակ այս օրերին ֆանտաստիկ եռանդով ու արագությամբ, գրեթե քվելով քաղաքապետարանի շենքի արևելյան պատին, վեր է հանում հերթական «արհամարհանք» շինությունը: Մեր կարծիքով, այն արհամարհանք է

ՉԻՅ

49 ... Անդրանիկի առաջին բրոնզաձուլ հուշարձանը

փուլերի ձեռնարկույթներում. և՛ հիմնարկեքին, և՛ պատվանդանի կառուցմանը: Արձանի ձուլման հետ առնչվող գործողություններին: «Աջակից և սատար են եղել երիտասարդ շնորհալի քանդակագործ Գեղամ Բեգջանյանին, օգնել արձանի հիմնականիքի կառուցմանը: Համարում եմ, որ կյանքիս լավագույն պահերից են այսօր արդեն հուշ դարձած այդ օրերը: Ինչպես կարող էի նման հայրենասիրական ձեռնարկման մեջ չլինել, արվեստագետն այնտեղ պետք լինի, ուր ժողովրդի սիրտն ու իդեալն են: Ջորավարն իր կերպարով ինձ մշտապես ուղղորդել և ուղղորդելու է ինձ իմ այդ կողմնորոշման մեջ: Շատ տպավորիչ էր, երբ բացման օրը մասնակից դարձավ Երևանի «Ջորավար Անդրանիկ» թանգարանի համահիմնադիր տիկին ժողովուհ Առաքելյան-Բեգլարյանը, ով իր հետ բերել էր զորավարի մարտական թուրը, որը ժամանակավոր ի պահ տրվեց Արցախյան ազատամարտի երախտավոր և «ԼՈՐՎԱ ԱՄՊԵՏ» տիտղոսա-

կիր գեներալ-լեյտենանտ Միքայել Գրիգորյանին: Ես գյուժերեցի եմ, Հայաստանի մշակութային մայրաքաղաքից: Ապրելով և ստեղծագործելով Վանաձորում, միշտ մտածել եմ, որ այստեղ ևս հասարակությունը պիտի տեսնի ու զգա Ջորավարի ներկայությունը, այստեղ ևս, ինչպես Գյուժերում, Ուջանում նրա փառահեղ կերպարը ուղեկցող պիտի լինի յուրաքանչյուր հայորդու, ուստրերին և դուստրերին, ինչպես Փարիզում՝ Պեր Լաշեզում է սփյուռքացիայի համար: Պեր Լաշեզում ես դա տեսել և զգացել եմ, իսկ ինչու Վանաձորում չպիտի լիներ:

Այդ առումով, իհարկե, կարծում եմ, որ շնորհակալ և ազգաշահ գործ արեցինք մեր Նախաձեռնող խմբով: Ինչպես մեր սրբազան լեռը՝ Արարատն է խորհրդանշում հայության համախմբում, այնպես էլ Ջորավարը. դա է սույն ձեռնարկման խորհուրդը: Դա կայացել է: Ասեմ ավելին՝ ազնվացնող և ոգեկոչող միջավայր է ստեղծվել Վանաձորում: Արդեն այստեղ նորապսակ գույգեր են գալիս հավերժացնելու իրենց համատեղ կյանքի առաջին օրը, իսկ դա շատ բան է նշանակում», – շեշտել է Տիկնիկյանի թատրոնի տնօրենը:

Էդիկ Ղաբուլյանը մեր այն գեղագետ-գիտնականն է, ով իր ստեղծագործական տղևանքով ազգային արժեքը համամարդկային ասպարեզ մղեց՝ շունչ ու ոգի հաղորդելով տառակերպման արվեստին: Տառի կերպի հոգեբանությունը նուրբ և դժվարընկալելի էություն է, որն ըմբռնելու համար գիտելիքներ ու ճաշակ ունենալը քիչ է, ոգեղեն ավիշ էլ պիտի ունենալ:

ՍԱՍԿԵԼ ԽԱՆԱԹՅԱՆ

Տերյանին եւ Չարենցին «սագող» տառեր ստեղծող Էդիկ ՂԱԲՈՒԶՅԱՆԸ

Նրա ձեռագիրը հայկական թղթադրամների վրա է, փողոցներում պատահականորեն ու խանութների ճակատներին, նրա տառատեսակներով են բոլոր պետական պաշտոնական փաստաթղթերը, խոշոր հրատարակչությունների գրքերը:

Էդիկ Ղաբուլյանը մոտ 300 տառատեսակ է ստեղծել: Գործից չհասկացողները կգարմանն նույն տառի 300 տեսակ ինչի է պետք:



«Տառատեսակն այսօր օգտագործվում է ոչ միայն գրավոր խոսք փոխանցելու համար, այն նաև դիզայնի կարևորագույն բաղադրիչ է: Եթե ձիշտ տառատեսակ չընտրեցիք, լավ դիզայնի մասին խոսք լինել չի կարող: Ցանկացած մեզապոլիս, ինչպես Մոսկվան, Բեռլինը, ունի իր տառատեսակը, նույնիսկ Նյու Յորքի օդանավակայանը: Բրենդային ընկերություններն ունեն իրենց տառատեսակները, եւ միայն դրանք են օգտագործում իրենց գովազդներում, տեխնիկական անձնագրերում: Իսկ մենք շատ հեռու ենք այս ամենից, զրո»:



Էդիկ Ղաբուլյանը

Էդիկ Ղաբուլյանը մաթեմատիկոս է: Թվերը տառերով փոխարինեց 1987-ին, երբ որպես Ավտոմատացման եւ կառավարման համակարգերի բաժնի վարիչ մեկնեց Կազան ու առաջին անգամ տեսավ անհատական համակարգիչ: Հրաշք սարքը ծաղիկ էր տպում. եթե կարող է ծաղիկ տպել, ինչու հայկական տառեր չտպի:

«Դրանից հետո հիվանդացա տառ ստեղծելու հիվանդությամբ ու հիմա ուրիշ ոչնչով չեմ կարողանում զբաղվել»:

Ասում է այն ժամանակ պրոֆեսիոնալ տառատեսակները համակարգչին չէին տիրապետում եւ նոր տեխնոլոգիաներով տառեր սարքել չէին կարող: Բնքն ու մի խումբ նվիրյալներ անցան գործի ու առաջին տարիներին մեծ թվով «խոտան» արտա-

դրեցին: Հայկական տառեր էին ստեղծում՝ լատինականի համաչափությամբ, մինչև հասկացան վատն են, դժվարընթեռնելի:

«Չի կարելի կիրիլյանի ու լատինականի համար մշակված համաչափությունները կուրորեն տեղափոխել հայկական: Նրանց տառերը մեկը մյուսին նման չեն, իսկ հայերենում վերջույթների ու տառամարմնի հարաբերությունը շատ կարևոր է»:

Այսօր էլ քիչ չեն տառատեսակներով զբաղվող ոչ պրոֆեսիոնալները: Էդիկ Ղաբուլյանն ասում է հայկական թերթեր կան՝ տառերի կեսը հայերեն չեն: Լատինական f-ը p-ի փոխարեն են օգտագործում, r-ը p-ի, s-ը՝ տ-ի: Նույն տառի տարբեր տեսակներ են օգտագործվում տարբեր հրատարակչությունների այբբենարաններում անգամ:

«Ես չեմ կարող ասել եթե դասագրքի տառերը ձեզ դուր չեն գալիս, մի՛ կարդացեք, եթե իմ տառերով տպագրված «Անուշ» պոեմը ձեզ դուր չի գալիս, մի՛ կարդացեք: Ես պարտավոր եմ մտածել ընթերցողի, նրան չընկճելու, աչքերը չհոգնեցնելու մասին»:

Տառատեսակը ստեղծելուց առաջ պետք է իմանաս ինչի համար է այն օգտագործվելու: Էդիկ Ղաբուլյանն իր 30 տարվա փորձառությամբ գիտի տառատեսակի ընտրությունը չափազանց կարևոր է: Այլ է գովազդի համար օգտագործվող տառատեսակը, այլ դասագրքի, մանկական կամ պատմական գրքերի համար նախատեսվածները:

«Չեք կարող Տերյան ու Չարենց նույն տառատեսակով տպել: Տերյանի ոգին փոխանցելու համար նուրբ տառեր են պետք, շքեղ ուրվագծերով, մաքուր, բարակ, Չարենցի դեպքում՝ եռանդուն տառեր:


Անուրակ, դժվարընթեռնելի տառատեսակներն ազդում են մարդու հոգեբանության վրա, ապատիա են առաջացնում, աչքի ու գլխի ցավ: Պատահում է մի շատ հետաքրքիր գիրք, որ երկար փնտրել եք, բացում եք, որ կարդաք, չեք կարողանում: Չեք գտնում ինչից է, իրականում՝ տառատեսակը չի տրամադրում կարդալ: Ենթագիտակցաբար ազդում է, բայց շատերը չեն գտնում: Միայն պրոֆեսիոնալ տառատեսակներն ու դիզայներները գիտեն պատճառը»:

Ղաբուլյանն ասում է, որ արտերկրում տառատեսակների աշխատանքը կարևորվում է, պետական լուրջ քաղաքականություն է տարվում: Չինաստանում, օրինակ, Երեւանի բնակչության չափ տառատեսակը կա: Հայաստանում այս աշխատանքով զբաղվող պրոֆեսիոնալներին մի ձեռքի մատների վրա կհաշվես:

«Մեր տառատեսակների շտեմարանը շատ սուղ է: Մաշտոցից սկսած առավելագույնը 1000 տառատեսակ ունենք: Մինչդեռ լատինական մի քանի հարյուր հազար տառատեսակ կա»:

Դեռ մի քանի տարի առաջ հայկական տառատեսակների ստեղծմամբ զբաղվում էր Ազգային գրապալատը: 2 տարի առաջ գրապալատը միացավ Ազգային գրադարանին: Հայկական տառատեսակների պահպանման ու մշակման բաժինը, որը ղեկավարում էր Էդիկ Ղաբուլյանը, փակվեց: Հիմա պետական որեւէ ՊՈԱԿ տառատեսակներով չի զբաղվում:

Տառատեսակ ստեղծելը հեշտ աշխատանք չէ: Մասնագիտացած ընկերություններում մի տառատեսակի նախագծմանը մի քանի մարդ է մասնակցում: Մեկը տառի տեսքն է նկարում, մյուսը միջտառային հարաբերություններն է կարգավորում, երրորդը՝ կետաշտկմամբ զբաղվում... Այդ ամբողջ աշխատանքը Ղաբուլյանն ինքն է անում:



Նոր տառատեսակ ստեղծելու պատվերներ ստանում է արտերկրից, համագործակցում է հեղինակավոր մասնագիտացած ընկերությունների հետ: Հայաստանի պետական պաշտոնական փաստաթղթաշրջանառության պարտադիր կիրառման համար 2010 թվականին պետությունը Էդիկ Ղաբուլյանից գնեց GHEA Grapalat եւ GHEA Mariam տառատեսակները: Այլ պատվերներ Հայաստանից չի ստացել. նոր տառատեսակ ստեղծելը թանկ է: Լավագույն դեպքում գնում են արդեն գոյություն ունեցող 300 տեսակից, բայց հաճախ դրանք ուղղակի ձեռքից ձեռք են անցնում: Վերահսկելը դժվար է, տառատեսակի աշխատանքն օրենքով պաշտպանված չէ:



«Տառատեսակների հեղինակային իրավունքի հարցը բազմիցս բարձրացվել ու այդպես էլ մնացել է: Տարիներ առաջ Մտավոր սեփականության գործակալությունում խոսեցի այդ մասին, պետի տեղական ասաց Մաշտոցը տառերը ստեղծել է, դուք ինչ եք անում, որ լիցենզիա եք ուզում: Մի ոչ պետական ընկերություն էլ ասում է՝ տառերը սկավառակով բերեք, անուններ գրեք, հետո մի թուղթ է տալիս լիցենզավորեցիք: Էդպես ցանկացած մեկը կարող է իմ տառերը տանել, լիցենզավորել իր անունով»:

Անկախ պահանջից, շարունակում է նոր տառատեսակներ ստեղծել: «Առանց


Քչերը գիտեն, որ ...



Քչերը գիտեն, որ Երևանի կայարանում տեղադրված քանդակը Քոչարի «Մասունցի Դավիթ» քանդակի 2-րդ տարբերակն է, որը վարպետը վերջացրեց 1959 թվականին: Իրականում քանդակն ունեցել է 1-ին տարբերակ, որը, սակայն, ունեցավ ողբերգական վախճան: Քանդակից մասցել են միայն մի քանի լուսանկարներ, որոնք ևս մեկ անգամ փաստում են, որ խորհրդային տարիներին ոչնչացվում էր բարձր արվեստը:

1939 թվականին նշվում էր մեր էպոսի «Մասնա ծոերի» 1000-ամյակը: Այդ նույն թվականին Մանուկ Աբեղյանի, Գևորգ Աբովի ու Արամ Դանալանյանի ջանքերով ստեղծվեց էպոսի համահավաք բնագիրը: Եվ տրամաբանորեն պիտի ստեղծվեր նաև էպոսի գլխավոր հերոսի Մասունցի Դավիթի քանդակը: Այդ ժամանակ էր, որ Քոչարը, հանձարեղ քանդակից գատ, որեց նաև իր ապագա ձեռքակալության հիմքերը:

«Մասունցի Դավիթ» արձանի ստեղծման գաղափարն առաջացավ 1939 թվականին, երբ նշվում էր մեր ազգային էպոսի հազարամյակը: Մինչև տոնակատարությունների մեկնարկը քիչ ժամանակ էր մնում: Հորեյանական հանձնաժողովը որոշեց, որ ազգային հերոսի արձանը պետք է տեղադրվի Երևանի երկաթուղային կայարանի առջև, որպեսզի Մասունցի Դավիթը «դիմավորի» մայրաքաղաք ժամանող հյուրերին: Դիմեցին հայտնի քանդակագործներին՝ Արա Մարգարյանին, Մուրեկ Մտեփանյանին, Այծեմակի Ուրարտունին, սակայն բոլորը հրաժարվեցին, քանի որ ժամկետը շատ սեղմ էր: Հանձնաժողովի անդամներից մեկն առաջարկեց դիմել Քոչարին, ով այդ տարի վերադարձել էր Փարիզից: Քոչարը համաձայնեց կերտել արձանը խնդրելով իրեն տրամադրել մեկ ասիստենտ և գիպս: Նա աշխատում էր անմիջապես կայարանի



հրապարակում: Ընդամենը 18 օր անց արձանը պատրաստ էր» (հատված Լալա Մարտիրոսյան-Քոչարի հոդվածից):

Քանդակի ստեղծման նախապատմության ու աշխատանքային դժվարությունների մասին մի հրաշալի հուշ ունի հենց ինքը՝ Երվանդ Քոչարը, ով մանրամասն պատմում է այդ օրերի իր զգացողությունների ու քանդակի ստեղծման աշխատանքների մասին.

«1937 թ. խառն ու դժնդակ տարիներից հետո կյանքը նորմալ հունի մեջ էր մտնում: 1939 թ. Հայաստանը պատրաստվում էր «Մասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակին: Սպասում էին հյուրերին: Բայց... էպոսի գլխավոր հերոսի արձանը չկար: Ես արդեն ձեռնարկել էի պլաստիկինից մի փոքրիկ արձան: Այդ ժամանակ ապրում էի Տերյան փողոցի թիվ 65 համարում: Հրաչյա Գրիգորյանը տեսել էր այդ գործը և հավանել: Նա Գրիգոր Հարությունյանին առաջարկում է իմ էսքիզը: Գիշերվա ժամը 12-ին մոտ Հրաչյա Գրիգորյանը եկավ, թե՛ գնանք կենտրոն: Գրիգոր Հարությունյանը միջինից բարձր երիտասարդ մարդ էր, լուրջ և խոհուն: Նա ուշիուշով գնեց իմ էսքիզը և հետո ասաց, որ շտապ է հարկավոր իրականացնել արձանը, քանի որ հոբելյանին շատ քիչ ժամանակ է մնացել: Հարցրեց կարո՞ղ եմ արդյոք հպացնել... Ես ինքնավստահ պատասխանեցի՝ այո, եթե միայն իմ պահանջներն առանց ուշացման կատարվեն: Գրիգոր Արտեմիչը կարգադրեց մյուս օրվանից սկսել գործը: Նա ամեն օր



չորսից մինչև հինգը գալիս, հետևում էր աշխատանքին: Հովսեփ Օրբելու հետ գնացել էինք Գրիգոր Արտեմիչին այցելության, նա խոստովանեց, որ էսքիզը տեսնելով հրամայել է անմիջապես սկսել գործը, բայց հետո կասկածել է կկարողանա մ ժամանակին վերջացնել... Մի հինգ օր հետո, երբ տեսել է ձին արդեն ձևավորվում է, ինքն էլ է ոգևորվել» («Մատարոք Քոչարը» Երևան, «Անտարես»):

Կայարանում տեղադրվեց Դավիթի քանդակը, տոնակատարությունն անցավ բարեհաջող, բոլոր հյուրերը գոհ մնացին, սակայն Քոչարի համար իրական «տոնակատարությունը» սկսվեց այդ ամենից հետո: Իրականում խորհրդային ժամանակաշրջանում հայտնի մարդկանց դեմ մեղադրանքների համար բավական էր միայն լավ երևակայություն, և արդեն իսկ քրեական նոր հոդվածը պատրաստ կլիներ: Նույն կերպ վարվեցին նաև Քոչարի հետ, ով Մարյանի նման, Հայաստան գալով, գոհեց իրեն, որպեսզի զարգանա Երևան քաղաքը:

Արդյունքում 1941 թվականի հունիսի 23-ին Երվանդ Քոչարը բանտարկվեց: Քոչարին բանտարկեցին, քանի որ քանդակում «մերկացրած սրով հեծելալու նայում է դեպի «բարեկամ» Թուրքիա... Եվ այս դեպքում այլ բան չէր մնում, քան ուղղակի ջարդոնափշուր անել Քոչարի հրաշալի քանդակը, որի համար վարպետը ջանք ու եռանդ չխնայեց, որպեսզի անքուն գիշերներ անցկացնելով ավարտի այն: Արդյունքում նոր-նոր զարգացող Երևան քաղաքից պակասեց ևս մեկ արվեստի գործ, արդյունքում դրախտային Եվրոպայից հայրենիք եկած Քոչարը հայտնվեց ձաղերի ետևում, քանի որ համարվելով վեր Դավիթի թուրն ուղղել դեպի բարեկամ Թուրքիայի կողմը: Եվ տեսականորեն Թուրքիան ունանց համար բարեկամ էր, իսկ ոմանք էլ իրենց ստիպում էին, որ մայրաքաղաքից մի քանի կիլոմետր այն կողմ բարեկամ երկիր էր, ովքեր մի քանի տասնամյակ առաջ մեզ ոչ թե կոտորել, այլ ուղղակի խաղաղ կերպով տեղահանել են ու խորհուրդ տվել, որ գանք մեր հայրենիքի արևելյան հատվածը ու այստեղ բնակվենք: Այդ կարգավիճակում Քոչարին այլ բան չէր մնում, քան լուր տանել սեփական տառապանքն ու սպասել, թե երբ պիտի մահանա «թիֆլիսցի կլինտոն», որի մահից հետո միայն կգա մի փոքր շունչ քաշելու ժամանակը:

60 ... տառեր ստեղծող Էդիկ ՂԱԲՈՂՅԱՆԸ



Լուսինե Ղարիբյանը զրուցում է Էդիկ Ղաբոլյանի հետ

տառ սարքելու չեմ կարող: Ասում եմ, չէ՞, հիվանդացել եմ»: «Արմենիա», «Տաթև»,

«Տիգրան», «Էրեբունի», «Կաթիլ», «Լոռի»... Օգտագործել է ընտանիքի անդամների, աշխարհագրական տասնյակ անուններ, ու հիմա նոր անուն գտնելը տառատեսակ ստեղծելու չափ բարդ է դարձել: «Տառը ստեղծելու պահին մտքիդ սիրուն անուններ են գալիս, նայում ես տառիդ հարմար, համահունչ չես»:

30 տարվա աշխատանքի մասին խոսելիս բազմաթիվ հետաքրքիր կողմեր ու միայն մի թերություն է նշում:

«Գիրք կարդալ չեմ կարողանում: Մի տող կարդում եմ, մի տառ եմ տեսնում ու սկսում մտածել դրա մասին: Հետո հիշում եմ, որ պիտի գիրք կարդամ, մի քանի տող ընթերցում եմ, ու էլի նույնը: Մինչեւ հասկացա ինձնից գիրք կարդացող դուրս չի գա»:

Լուսինե ՂԱԲՈՂՅԱՆ
Լուսանկարները՝ Էմիլ ՄՐԻՍՏԱԿԵՍՅԱՆԻ

Վահան ՏԵՐՅԱՆ. յուրայինների մեջ՝ օտար, օտարների մեջ՝ յուրային



Լուսակարը՝ Վահան Տերյանի ընտանեկան արխիվից

100 տարի առաջ՝ 1917 թվականի դեկտեմբերի 9-ին **Բրեստ-Լիտվսկում մեկնարկեցին** Խորհրդային Ռուսաստանի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի եւ Թուրքիայի մասնակցությամբ հաշտության բանակցությունները, որոնք ծանր հետեւանք ունեցան Արեւմտյան Հայաստանի համար: Ռուսական պատվիրակության կազմում էր նաեւ մեծանուն հայ բյուսատեղծ Վահան Տերյանը: Ինչպե՞ս էր նա այնտեղ հայտնվել, ո՞րն էր նրա նպատակը եւ ինչու էր բանաստեղծը դարձել բոլշեիկ հեղափոխական: Փորձենք միասին թերթել Տերյանի կենսագրության քիչ հայտնի էջերը...

**Ո՞վ է կանգնել պաշտպան երկրին իմ ավեր,
Ո՞վ է թարգման մեր դարավոր տանջանքին...**

Մահվանից առաջ գրած այս տողերում ամփոփված միտքը կյանքի վերջին շրջանում հատկապես շատ էր տանջում Վահան Տերյանին: 20-րդ դարի առաջին տասնամյակի վերջին տարիները դժվարին եւ բախտորոշ շրջան էին հայ ժողովրդի համար:

Պատմական այս թռուցիկ կենտրոնում՝ բազմաթիվ հայտնի անունների կողքին իր հաստատուն տեղն ունի հայ գրականության խոշոր դեմքերից մեկը՝ Վահան Տերյանը, որի քաղաքական ու հասարակական գործունեության մասին խորհրդային տարիներին կարծես շատ է խոսվել, սակայն իրականում գրեթե ոչինչ չի ասվել: Ավելի ճիշտ ասվել է այն, ինչ կարելի էր եւ ձեռնտու էր այն ժամանակ:

Վահան Տերյանը գործուն մասնակցություն է ունեցել Թուրքահայաստանի մասին դեկրետի հայերի համար շահեկան տարբերակի ստեղծմանը եւ փորձել է բարձրացնել Հայկական հարցը Բրեստ-Լիտվսկի բանակցությունների ժամանակ: Մակայն խորհրդային շրջանում նա մեծարվում էր միայն որպես բոլշեիկ բանաստեղծ, եւ այդ տարիներին չէր խոսվում Կոմունիստական կուսակցության հետ նրա լուրջ բախումների, բոլշեիկյան ղեկավարության հետ տարաձայնությունների, դառն հիասթափությունների եւ մահվան չբացահայտված հանգամանքների մասին: Իսկ առաջին հերթին չէր խոսվում նրա խորը ազգային գործիչ լինելու մասին:

Ոչ այնքան բոլշեիկ, որքան հակազգարական

Ոչ ոք հստակ չգիտի, թե կոնկրետ երբ է Տերյանը դարձել բոլշեիկ, եւ ոչ էլ խորությամբ բացահայտված է, թե ինչու է այդ շրջանում հայ մտավորականության մի հատվածը հարել բոլշեիզմին: Որքան էլ տարօրինակ է, Տերյանի դեպքում լավագույն բացատրությունը տվել է ՀՅԴ այն ժամանակվա առաջին դեմքերից մեկը՝ Ռուբեն Դարբինյանը. «Որքան որ առիթ ունեցայ դիտելու Վահանը այդ շրջանին մեջ, ան անկեղծ էր իր քաղաքական համոզումներուն մեջ, բայց բոլշեիկ դարձած էր ոչ այնքան այն պատճառով, որ անխախտ ու անվերապահ հաւատ ուներ դեպի բոլշեիկեան գաղափարները, որքան այն պատճառով որ անսահման ատելություն ուներ դեպի

հին ցարական կարգերն ու իշխանությունը: Հայրենասեր, ազգասեր հայ մըն էր ան: Կը հաւատար անկեղծօրէն, որ բոլշեիկներուն ընկերանալով՝ պիտի կարողանար նպաստել Հայ դատի լուծման»:



Վահան Տերյանը
Լուսակարը՝ Վահան Տերյանի ընտանեկան արխիվից

Ռուբեն Դարբինյանի բնորոշումը դիպուկ է. Տերյանը իսկապես հավատում էր, որ ապագայում իր ընտրած կուսակցության շնորհիվ հայերի վիճակը թերթեւանալու է, սակայն շատ շուտով Տերյանը պիտի հասկանար, որ, հայրենասեր, ազգասեր հայ մըն տեղ չունի ոչ բոլշեիկյան շարքերում, ոչ ՀԿԿ-ում:

Հենց սկզբից նա նախընտրեց այնպիսի պաշտոն, որը ստանձնելիս կկարողանար զբաղվել ազգային հարցերով, թեեւ մյուս առաջարկվող պաշտոնն ավելի շահեկան էր:

«Ինձ առաջարկում են պաշտոն Ազգային գործերի մինիստրության մեջ եւ Արտաքին գործերի մինիստրության մեջ: Դեռ չեմ որոշել: Երեւի Ազգային գործերի մինիստրության մեջ կվերցնեմ պաշտոն հայկական մասում աշխատելու նպատակով:»

Ցավոք, այս նամակը, ինչպես շատ այլ նամակներ, մեզ հասել է ոչ ամբողջությամբ: Տերյանի այդու վկայությամբ, դեռեւս շատ տարիներ առաջ այդ նամակներն իրենից վերցրել էր բանաստեղծի երբեմնի մտերիմ ընկեր, հայտնի հասարակական գործիչ Պողոս Մակինջյանը: Հետագայում այդ նամակներն իրենց հայեցողությամբ խմբագրած տարբերակներով տպագրեցին նույն Մակինջյանը, տերյանագետ Վաչե Պարտիզունին եւ այլ գրականագետներ:


Իսկ հետավոր 1917-ին լիափութա Տերյանը ոգեւորված աշխատանքի է անցնում: Այն փաստը, որ նա պաշտոնն ավելի շուտ էր ստացել, քան դարձել էր կուսակցական, եւս խոսում է այն մասին, որ նա բոլշեիկ էր դարձել հանգամանքների բերումով: Հավանաբար, բոլշեիկյան ղեկավարությունը բարձր էր գնահատել Տերյանի ներկայությունն իրենց շարքերում, քանի որ կուսակցությանը օրեր առաջ անդամագրված բանաստեղծն անմիջապես դառնում է կառավարության անդամ եւ փաստացի սկսում է ղեկավարել Հայկական կոմիսարիատը, իսկ Պետրոգրադում նրա աշխատասեղանը հեղափոխության առաջնորդ Վլադիմիր Լենինի սենյակի կողքին էր: Տերյանի առաջխաղացման գործում որոշիչ էր նաեւ Ստեփան Շահումյանի դերը: Բանաստեղծն ու գործիչը մեծ հարգանք ունեին միմյանց նկատմամբ:

Թուրքահայաստանի մասին դեկրետը, Ստալինի հետ առաջին բախումն ու ընկեր «Լենինը»

Սկզբում Տերյան-Լենին հարաբերությունները հարթ էին: Ավելին՝ Տերյանի որոշ քաղաքական հարցադրումներին Լենինն արտաքուստ ընդառաջում էր: Տերյանը Դաշնակցության շատ գոր-

80

ծիչների պես դեմ էր, որպեսզի ռուսական զորքերը դուրս բերվեն Թուրքահայաստանից, քանի որ այդպես ժողովուրդը մտում էր անպաշտպան։ Այդ ամենը նրանց պատկերացմամբ պետք է տեղի ունենար Թուրքահայաստանի անկախացումից հետո։ Այս հարցով Տերյանը դիմում է Լենինին եւ ստանում գոհացուցիչ պատասխան։ «Նա շատ լավ վերաբերվեց, եւ պարզվեց, որ երբ ինքն ասում է՝ զորքերը հանել Հայաստանից, սրանով ուզում է ասել, թե երբ հայերը պահանջեն այդ, որպեսզի նրանց վրա ճնշում չլինի Ռուսիայի կողմից, եւ նրանք ստիպված չլինեն ռուսական օրինետացիա ընդունել։ Իսկ հայերի ապահովության համար, եթե նրանք այդ կամենան, նա բնավ դեմ չէ, որ մասն հարկավոր եղած զորամասերը»։



Վահան Տերյանը

Լուսակարը՝ Վահան Տերյանի ընտանեկան արխիվից

Սա Լենինի դիվանագիտական խորամանկ պատասխանն էր Տերյանին, իսկ ահա Ստալինն առանց վարանելու Տերյանի երեսին ասաց. «Մենք իսկույն եւեթ կկարգադրենք, որ զորքերը հեռանան...»։ Սակայն երբ Տերյանը Ստալինին տալիս է Լենինի գրությունը, եւ նա կարդում է այն, բանաստեղծի վկայությամբ, Ստալինը արդեն այլ կերպ է խոսում։

Այս հարկադրված զիջումը Տերյանին, բնականաբար, Ստալինին դուր չի գալիս։ Սակայն դա քիչ էր հուզում Տերյանին, որովհետեւ ինքն էլ բացասական կարծիք ուներ Ստալինի մասին։ Շատ լավ հիշում էր, թե ինչ արհամարհական վերաբերմունք ուներ Բոսֆի հանդեպ իր կողմից շատ հարգված Շահումյանը։ Վերջինս իր այդ վերաբերմունքը բնավ չէր թաքցնում եւ բացահայտ ասում էր, որ 1905 թվականին իր ձեռնարկության մատնիչը Ստալինն էր, քանի որ միայն նա գիտեր իր թաքնվելու վայրը։ Մինչեւ վերջ Ստալինը, կամ «Կոբան», ինչպես անվանում էին նրան մինչեւ հեղափոխությունը, Շահումյանի համար մնաց ցարական «օխրանկայի լրտես»։

Ստալինը եւ Լենինը շատ լավ հասկանում էին, որ Տերյանին առաջին հերթին հուզում են իր ազգի շահերը, սակայն իրենք էլ իրենց խաղն էին խաղում՝ առերեսությո շատ հարցերում համաձայնելով Տերյանի հետ։ Դրանցից կարեւորագույնը, իհարկե, Թուրքահայաստանի մասին դեկրետն էր, որի կյանքի կոչման գործում նշանակալի դեր է ունեցել Տերյանը։ Նույն Ռուբեն Դարբինյանն այս մասին գրում է. «Ան էր, որ օգնած Լենինին ձեռնարկելու եւ հրատարակելու վերջինի ծանօթ «դեկրետ»-ը Տաճկահայաստանի մասին։ Ան էր դարձնել, որ Պրես-Լիթվիցիի հաշտության կոնֆերանսին ատեն Հայկական հարցի մասին յուշագիր էր ներկայացուցած Սովետական պատուիրակության»։

Այդ դեկրետի առաջնային կետը պետք է հետեւյալը լիներ, «Թուրքահայաստանի հայերի ազատ ինքնորոշման իրավունք ընդհուպ մինչեւ լիակատար անկախություն»։ Այս կետն շատ էր ուրախացրել Տերյանին եւ հայ հասարակական-քաղաքական գործիչներին։ Նրանցից շատերը ջանք ու ճիգ չէին խնայում, որպեսզի այն իրականություն դառնա։

1917 թ.-ի դեկտեմբերի 29-ին դեկրետն ընդունվեց, սակայն ճիշտ հակառակ հայերի համար անբարենպաստ դրույթներով։ Իսկ Տերյանը թերեւս առաջին անգամ սկսեց գիտակցել, որ հայա-

պաշտպան քաղաքականություն բուլշեիկներից սպասել պետք չէ։ Պատահական չէ, որ հետագա նամակներում Լենինին հիշատակելիս Տերյանն արդեն գրում է Դենին ծաղրելով առաջնորդի լեզվական արատը։ Այնուամենայնիվ, այդ շրջանում բուլշեիկյան դեկլարությունից բանաստեղծը դեռեւս վերջնականապես հույսը չէր կտրել։ Դա տեղի պետք է ունենար Բրեստ-Լիտովսկի պայմանագրի բանակցությունների ժամանակ։

Ֆիասթափություն Բրեստ-Լիտովսկից եւ բախում Տրոցկու հետ

Բանակցությունների հետ Տերյանը, ով ներառված էր ռուսական պատվիրակության երկրորդ կազմում, մեծ հույսեր էր կապում։ Նա հույս ուներ, որ վերջապես հնարավոր կլինի Հայկական հարցի լուծման գործում որեւէ դրական տեղաշարժ գրանցել։ Մինչեւ Բրեստ-Լիտովսկի մեկնելը նա հանդիպել էր դաշնակցական գործիչներ Ռոստոմի (Ստեփան Զորյան) եւ Լիպարիտ Նազարյանցի, ինչպես նաեւ զենքավա Լեոն Տիգրանյանի, պրոֆեսոր Նիկողայոս Աղոնցի եւ Մովսես Աճեմյանի հետ, նրանց հետ միասին կազմել Հայկական հարցին վերաբերող «ընդարձակ տեղեկագիր»։ Այդ տեղեկագիրը Տերյանը պետք է ներկայացներ բանակցությունների ընթացքում։ Իսկ արդեն Բրեստ-Լիտովսկից խնդրել էր իրեն ուղարկել մանրամասն տվյալներ Հայաստանում եւ սփյուռքում բնակվող հայերի մասին։ Ոչ այդ տվյալները, ոչ էլ տեղեկագիրը ներկայացնելու հնարավորություն նա այդպես էլ չունեցավ, ավելին՝ հաշտության այդ պայմանագրով հայերը կորցրին Արեւմտյան Հայաստանը։ Իսկ պայմանագիրը ստորագրողներից մեկը Լեւ Կարախանն էր (Լեոն Կարախանյան)։

Բրեստում Տերյանը տեղեկանում է նաեւ, որ ռուսական զորքերը մասսայաբար լքում են Արեւմտյան Հայաստանը՝ վերադառնալով Ռուսաստան, քանի որ ռուսական կառավարությունը հողեր էր բաժանում զինվորներին։ Փաստորեն Լենինը Տերյանին տված իր խոստումը չէր պահել։

Ակնհայտ է, որ իրերի այսպիսի դասավորությունը չէր կարող չհուզել եւ չգայրացնել բանաստեղծին։ Ըստ Տերյանների ընտանեկան հուշի այս առիթով բախում է տեղի ունենում Տերյանի եւ Տրոցկու միջեւ։ Տրոցկին մեղադրում է Տերյանին նացիոնալիզմի համար եւ անվանում նրան «армяшка»։ Բանակցությունների հետագա ընթացքից Տերյանը դուրս է մտնում։ Եվ հերթական անգամ ինչպես հայ ժողովուրդը, այնպես էլ այդ ժողովրդի գավալ Տերյանը մնում են ձեռնուկային։

Ի դեպ, Տերյանին հեզնականորեն «армяшка» անվանողն այն նույն Տրոցկին էր, որ ընդամենը 5 տարի առաջ իր «Андраник и его отряд» հոդվածում անթաքույց կերպով հիացմունք էր հայտնել Նժդեհի եւ Անդրանիկի մասին վերջինիս մասին գրելով. «Հայերը նրան եմբարկվում են, թուրքերը նրանից վախենում են, սուլթանական զորավարները հետեւում են նրան կրկնակալի... Զորախմբի հոգին Անդրանիկն է... Նա հիասքանչ է...»։

Ինչ վերաբերում է Տերյանին, Բրեստ-Լիտովսկում նա վերջնականապես հիասթափվեց բուլշեիկյան կառավարությունից։ Դժվար չէ պատկերացնել, թե ինչպես էր փոթորկվում բանաստեղծի սիրտը տեսնելով իր ժողովրդին կրկին խաբված։ Նրա տրամադրությունն ու ապագայի հանդեպ տեսլականը դառնում են մոռյալ ու հոռետեսական։ Եղբորն ուղղված նամակում նա գրում է. «Այս անիծելի հեղափոխությունն ամեն ինչ կործանեց եւ ինչ շարունակում է կործանել։ Չգիտեմ այս ամենի վերջն ի նչ է լինելու»։


Այդ շրջանի հիասթափությունն ու ապրումները նա արտահայտել է իր վերջին բանաստեղծություններից մեկում.

Օ, կգան օրեր ավելի տրտում
Ու դժնի, դժնի, առավել դժնի.
Կը դառնա հանկարծ բոլորն ապարդյուն,
Օ, կգան օրեր ավելի տրտում:
Կը լռե տրտու նցն անամոք սրտում
Եվ փոշու նման ձանձրությոը կիջնի...
Օ, կգան օրեր ավելի տրտում
Եվ դժնի, դժնի առավել դժնի...

Օտար՝ յուրայինների մեջ, օտարների մեջ՝ յուրային

Տերյանը չսխալվեց՝ «ավելի տրտում օրերը» չուշացան։ Հետագայում դեպքերը տեղի ունեցան ժանրի դասական կանոններով։ Տերյանը սկսեց հալածվել, որակվել որպես ազգայնական, եւ թոքախտի վերջին

ըրջանում գտնվող բանաստեղծին ռազմաճակատ ուղարկելու որոշում ընդունվեց: Հալածման հարցում առաջամարտիկ էին հատկապես հայ կոմունիստները: Այդ ամենը հանգեցրեց նրան, որ Տերյանը Հայաստանի կոմունիստական կուսակցությունից դուրս գալու դիմում գրեց մանրամասն շարադրելով իր կարծիքը դրա ղեկավարության ոչ լեգիտիմ լինելու, նրանց կողմից թույլ տված բազմաթիվ սխալների ու իր հանդեպ լարված խարդավանքների մասին: Այս դիմումի մասին խորհրդային տարիներին երբեք չի հիշատակվել, և միայն մի քանի տարի անց Տերյանի ծոռը Գեորգ Էմին-Տերյանը դրա ֆոտոպատճենը պատահաբար գտել է Գրականության և արվեստի թանգարանի չարխիվացված ֆոնդերից մեկում:



Վահան Տերյանը

Լուսանկարը՝ Վահան Տերյանի ընտանեկան արխիվից

Ազգային հարցերի բարձրաձայնելուց բացի, բոլշևիկյան ղեկավարությանը նյարդանացրել էր նաեւ այն, որ Տերյանը սիրով ողջունել էր Հայաստանի անկախացումը, կես միլիոն ռուբլի բաժանել Ասորիականի գաղթական հայերին և մտավորականությանը, գնդակահարությունից և բանտից փրկել էր մի շարք հայտնի մտավորականներ:

Վերջինի հետ կապված Դավիթ Անանունը գրել է. «Վահանը կարմրում էր իր կուսակցական ընկերների արարքների համար: Նա երաշխավոր կանգնեց իմ ու մի երկու ուրիշ ձեռքակալածների համար և մեզ ազատեց Էսենտուկիի բանտից: Մյուսների համար համառորեն պայքարեց և նրանց ազատությունը պահանջեց: Եթե Հանքային ջրերում հալածանքի ենթարկված մտավորականներս անփորձ ժառանգիք, ապա այդ պարտական ենք բացառապես Վ. Տերյանին»:

Վահան Տերյանը բանտից և գնդակահարությունից փրկել է նաև դաշնակցական գործիչների, մասնավորապես, բժիշկ Զավրիեիին, որին փրկելու և նրան գնդակահարելու մտադրության մասին լուրը բերած Դարբինյանին մատնել չցանկանալու համար քիչ էր ժառուցում Տերյանը ձեռքակալվել: Դարբինյանն այդ օրերի մասին գրել է, որ Տերյանի պատճառաբանությանը, թե տարրական ազնվությունը պահանջում է, որպեսզի ինքը չմատնի իրեն վստահող բարեկամին, ԿԳԿ քարտուղար, ազգությամբ հայ Ավանեսովը բացականչել է, որ ազնվությունը բուրժուական կատեգորիա է, և հանուն կուսակցության նա պարտավոր է մատնել անգամ հորն ու մորը, անգամ եթե նրանց մահ սպառնա: Ավելորդ է նշել, թե ինչքան տարբեր հարթությունների վրա էին գտնվում այդպես մտածող գործիչներն ու Տերյանը:

Ի դեպ, որոշ ժամանակ անց Զավրիեին էլ իր հերթին փորձել է օգնել Տերյանին առաջարկելով անցնել Շվեյցարիա: Տերյանը մերժել է: Դաշնակցական գործիչների հետ դրական հարաբերությունները նույնպես անջրպետ էին մտցնում բոլշևիկյան ղեկավարության և բանաստեղծի միջև:

Տարիներ անց խորհրդային քարոզչությունը Տերյանին պիտի որակեր մոլի հակադաշնակցական: Դա էր պահանջում ժամանակը: Տերյանն իսկապես շատ ու շատ հարցերում համաձայն չէր Դաշնակցության որոշումների, գաղափարների հետ և բացեիքաբար քննադատում էր դրանք, բայց նաև իրեն հատուկ օրելիություններ չէր կարող չնկատել դրականը: Այդպես ղեռնա 1906 թ-ին Սոնա Օտարյանին ուղղված նամակում նա գրել է. «Մերոնք այժմ բավականին

զինված են: Մանավանդ «Դաշնակցությունը» մեծ դեր է խաղում և իմ խորին համոզմունքով, եթե չըլինեք նա, շատ տեղերում հիմա ոչ մի հայ չէր մնայ: Թիֆլիզի ընդհարումների ժամանակ այնտեղ էի և աչքով տեսայ Դաշնակց. կատարած դերը: Կռուի մեջ Դաշնակց. իրաւ հալիսաարը չունի, բայց պրոպագանդը շատ թույլ է...»:

Իրականում սիրո, թախծի և պայքարի բանաստեղծի համար միեւնույն էին կուսակալությունները, միջկուսակցական հարաբերություններն ու գաղափարական կոնֆլիկտները: Նրա համար կարեւոր էր հայկականության շահը և ազնիվ աշխատանքը:

Առաջին կնոջը Մուսաննային ուղղված նամակում Բրեստ-Լիտովսկից հետո նա գրել է. «Ես իմ պարտքն եմ համարում, որքան էլ ծանր լինի, դիմանալ դրան, տոկալ և տվյալ պահին չքել պոստս: Հույս ունեմ, որ որոշ ժամանակ անց հնարավորություն կունենամ հանգիստ խղճով գալ քեզ մոտ: Որքան էլ ծանր և դժվարին լինի, դու ինձ կհասկանաս, Լյուիլինկա, և չես ուզենա իմ խղճի վրա բարդել մի բան, որը հետո կդառնա իմ և քո ամբողջ կյանքի անեծքը, ուստի և ինձ հնարավորություն կտաս ազնիվ վարվելու, պարտքս կատարելու և մնալու մաքուր, անքիժ խղճով»:

Բանաստեղծի մահանայուց հետո տարիներ շարունակ փորձ էր արվում ցույց տալու, որ Տերյանը բոլշևիզմի վաղ ջատագովներից է եղել: Նրա հեղինակությունն օգտագործելը ձեռնառու էր Կոմկուսին: Մակայն առնվազն տարօրինակ էր, թե ինչու այդ անվանի բոլշևիկը խորհրդային շրջանում այդպես էլ արձան չունեցավ: Ավելին, խորհրդային Հայաստանի ղեկավարությունը մերժեց Երեւան տեղափոխել բանաստեղծի աճյունը, ինչի արդյունքում նրա գերեզմանը կորավ Օրենբուրգում, և միայն տարիներ անց նրա դատեր Նվարդ Տերյանի ջանքերով այնտեղից հող բերվեց և Կոմիտասի անվան պանթեոնում ստեղծվեց բանաստեղծի խորհրդանշական գերեզմանը:

**Հահիճների մթին խմբում կըլինես դու միայնակ,
Եվ ամեն խոսք կըլինի թույն, ամեն ժպիտ՝ մի դանակ...**

Մինչև օրս բացահայտված չէ նաև, թե այդ ինչ հույժ կարեւոր, գաղտնի առաքելությամբ էր հիվանդությունից բզկտված Տերյանը 1919-ին մեկնում դեպի արեւելք, որի ճանապարհին էլ ի վերջո մահացավ: Վերջին շրջանի ուսումնասիրությունները հակված են ապացուցելու, որ Տերյանը չունեւ ոչ մի հանձնարարություն, պարզապես դա փախուստ էր Մոսկվայից բուժվելու նպատակով:

Տերյանը գնում էր ապրելու... Նրան այդ հարցում «օգնեց» կուսակցական հին ընկեր Կարախանը խորհուրդ տալով մերժել դաշնակցական Զավրիեի «կասկածելի» առաջարկը և ընտրել ամենաերկար, ամենաբարդ, բայց, իր կարծիքով, ամենաանվտանգ ճանապարհը: Բայց արդյոք օգնություն էր դա, թե մտածված ուղղորդում դեպի մահ: Մի թե Արտաքին գործերի կոմիսարիատի առաջին դեմքը չգիտեր, որ արեւելքը շրջանցող այդ ճանապարհին իրականում գոյություն չունի, և որ երթելի բոլոր ուղիները կաթվածահար են: Դժվար չէր նաև կռահել, որ ճանապարհային և կլիմայական խիստ ցուրտ ու խոնավ պայմաններում թոքախտից հյուծված 35-ամյա բանաստեղծի օրգանիզմը չի դիմանալու...

Սոսիս ԽԱՆԻԿՅԱՆ

Հողվածի պատրաստման աշխատանքների օժանդակելու համար հատուկ շնորհակալություն Գեորգ Էմին-Տերյանին:

Հողվածը պատրաստելիս օգտագործվել են հետևյալ աղբյուրները՝

Գեորգ Էմին-Տերյան, «Վահան Տերյան. Անտիպ և անհայտ էջեր (նամակներ, հողվածներ, գրախոսություններ)», Երեւան, 2014:

Գեորգ Էմին-Տերյան, «Վահան Տերյանի անհայտ նախածեռնությունը. հայ որբերի հուշերը», Երեւան, 2016:

Ռաֆայել Իշխանյան, «Տերյանն ինչպես որ կա», Երեւան, 1990:

Արտյոշ Խանջյան, «Մոռացված և անհայտ էջեր Վահան Տերյանի կյանքից», Երեւան, 2004:

Peter Kenez, «Civil war in South Russia, 1919-1920: the defeat of the whites», Berkely California, 1977.

Հողվածում տեղ գտած մեջբերումների ուղղագրությունն ու կետադրությունը դրանց հեղինակներին է:

Գրաբարդ ... ոսկի է, դա լեզու չէ, այլ երկնային երաժշտություն, պերճություն, ուժ, ճկունություն, այդ ամենը նոր եմ սկսում զգալ: Եվ ինչպիսի ծախքորությունների էլ հանդիպեմ, և որքան էլ ինձ համար դժվար լինի, ես պատրաստ եմ ամեն ինչի, միայն թե իրագործեմ երազանքս՝ կատարելապես ուսումնասիրեմ այդ արքայական լեզուն:

Վահան ՏԵՐՅԱՆ

Մարեդագործում են մեր ընթերցողները

Վլադիմիր ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՍԻՐՈ ՍՐԵՈՑ

Իմ սիրո բույնը չքանդեն հոգիս,
Այնտեղ հավքերս են իմ սիրով թրծված,
Եվ անգամ եթե չլինեն կողքիս,
Սիրուդ ջրով է իմ հոգին օծված:

Ազատ արձակի՛ր սիրուս հավքերին,
Թող ճախրեն և ազատ երկնքում կապույտ,
Նոր ցավ չդնեն նրանց վերքերին,
Թող որ թափառեն երկնքում անփույթ:

Թող սերս տանեն աշխարհից հեռու,
Մարդկանց հայացքից վաճառու, քծնող,
Թող դառնա սիրո աստղս ակնառու,
Սիրող սրտերին կայծերով սնող:
14.03.2013 թ.

ՆՎԵՐ

Ծիածանի վառ շողերից
Փնջեր կապեն են պես-պես,
Առավոտվա ծաղկացողով
Նվեր բերեն այդպես քեզ:

Նվերի հետ սիրտս դնեմ
Նուրբ քնքանքով քո ձեռքին,
Զգուշ եղիր թունդ չսեղմեն,
Նազուկ հայր քո կրծքին:

Շատ զգոն է աչքը սրտիս,
Փուշ չխրես նրա մեջ,
Թե կարող ես կայծ տուր հոգուս,
Որ վառ մնա լույսն անշեջ:
29.12.2012 թ.

ՆՎԵՐ ՄԱՐՏԻ ՈՒԹԻՆ

Հոգուս դատարկը քեզնով եմ լցնում,
Քեզնով է օրս մթնում ու բացվում,
Մտքիս մեջ դու ես ելույթս քո հեզ,
Էլ ինչպե՞ս ասեմ, որ սիրում եմ քեզ:

Այսօր քո տոնն է, և ութն է մարտի,
Դու թրթռացող զարկն ես իմ սրտի,
Քեզ ինչպե՞ս, օհ, ջան, շնորհս բերեմ,
Որպես թանկ նվեր, թող քեզ համբուրեմ:

Զէ՛, համբույրն ի՛նչ, քեզ գրկեմ կրքով,
Մեջքիդ ծիածան կապեն երկայնքով,
Հանեն վեր Մասիս, քեզ թագադրեն,
Սուրբ լեռան գլխին քո ձեռքը խնդրեն:


Գորգեր կփռեն քո ոտքերի տակ,
Աստղեր վար բերեն երկնքից կապուտակ,
Զէ՛ որ աչքերդ փայլն են աստղերի,
Սիրո կրակով բոցված, անթերի:

Եվ թող քեզ նվեր այս տոնի առթիվ,
Կակաչներ բերեմ, ալ վարդեր անթի՛վ,
Վառ հովտաշուշան, գարնան ծնծաղիկ,
Սիրով նվիրեմ անթառան ծաղիկ:

Դու կանանց տոնին փայլես ու ցնծաս,
Սա է լոկ սրտիս նվերն ու ընծաս,
Այս տողերով քեզ իմ սերը բերեմ,
Այրող կարոտով շուրթերդ համբուրեմ:
26.02.2013 թ.

ՎԱՐՉԱՆԱ ՍԱՐԻ ՈՒՐՎԱԿԱՆԸ

Իմ Վահան գյուղին այս սարն է նայում,
Իմ աչքերով է նրան փայփայում:



Վլադիմիր ԿԻՐԱԿՈՍՅԱՆԸ ծնվել է 1950 թ. նոյեմբերի 20-ին ճմբարակի (Մախ. Կարմիր) շրջանի Վահան (Մախ. Օրջոնիկիձե) գյուղում, կոլխոզնիկի ընտանիքում: Հայրը՝ Թեմուր Կիրակոսյանը, պատերազմի 2-րդ կարգի հաշմանդամ էր (1944 թվականից): Ի ծնե բանաստեղծ էր, ուներ գրվածքներ՝ տպագրված այն ժամանակաշրջանի «Բանվոր» շրջանային թերթում: Վլադիմիր Կիրակոսյանը ավարտել է գյուղի 8-ամյա դպրոցը և տեղափոխվել քաղաք Չարենցավան՝ ուսումը շարունակելու: 1968 թ. ավարտելով տեղի Մեսրոպ

Մաշտոցի անվան միջնակարգ դպրոցը, ընդունվել է ավարտել է Պոլիտեխնիկական ինստիտուտի «Ձուլագործության տեխնոլոգիայի մեքենաների և սարքավորումների» բաժինը: 1973 թ. անցել է աշխատանքի Չարենցավանի «Ձուլագործ» գործարանում որպես ինժեներ կոնստրուկտոր: Այդ ընթացքում ընդունվել է Երևանի Թատերական ինստիտուտի «Ռեժիսորական» բաժինը: Երկու տարի (երեկոյան) սովորելուց հետո թողել է այն՝ հիմնական աշխատանքի հետ անհամատեղելիության պատճառով: Բայց դա չէր խանգարում, որ նա աշխատեր նաև Չարենցավանի «Արտավազդ» ժողթատրոնում և «Նիխիտ» գիտահետազոտական ինստիտուտ-գործարանում որպես բեմադրող ռեժիսոր:

Գրել սկսել է 1980 թվականից, չհաշված պատանեկության տարիների նախասիրությունները: 1995 թ. տեղափոխվել է ՌԴ Վորոնեժ քաղաք: Կատարել է տարբեր տիպի ինժեներատեխնիկական աշխատանքներ, ինչպես նաև աշխատել է գլխավոր տեխնոլոգի և գլխավոր ինժեների պաշտոններում:

Առաջին գիրքը, «Կարոտի ճանփով» լույս է տեսել Վորոնեժ քաղաքում 2002 թվականին, իսկ շնորհանդեսը տեղի է ունեցել Չարենցավանի Մեսրոպ Մաշտոցի անվան դպրոցում (տն. Գայանե Փանոսյան): Երկրորդ գիրքը, «Լույս և հույս» լույս է տեսել նույնպես Վորոնեժ քաղաքում, բայց շնորհանդեսը կատարվել է Երևանի Գրողների Միության տանը 2014 թվականին, որին ներկա են եղել գրողներ և Արցախից եկած ազատամարտիկներ, ինչպես նաև Համահայկական Գրողների Միության նախագահ Արզար Ափիյանը, հրապարակախոս և գրաքննադատ Մաղենա Ավդալյանը (Մաղենա Վանի): 2018 թ. աշխատել է Վորոնեժի Հայկական համալսարանի նախագահի օգնական մինչև 2019 թ. ապրիլ ամիսը:

Վարդանա սարիս մի քարի վրա
Նստած լսում եմ խորհուրդը նրա:
Պատմում են սերս մտքերով տարված
Ու կարդում նրան երգերս գրված:

Լսում է նա ինձ իր սրտով քարե,
Սակայն չի ասում խոսքն իր մարգարե:
Պատմում են նրան կարոտս անհուն,
Ապրած օրերիս գիշերներն անքուն:

Իսկ երբ քնեցի քարերի վրա,
Լոկ բույրն զգացի մամռնտած նրա:
Օ՛, այս ի՛նչ հրաշք, մի աղջիկ հանկարծ,
Մամռե հագուստով կանգնեց իմ դիմաց:

Շա՛տ գեղեցիկ էր, յուր դեմքով քարե՛,
Իսկ կրծքերն ասես զույգ նռնաքարեր:
Չեռերը պարզած ինձ գիրկն էր կանչում,
Ես էլ հենց կարծես այդ էի տեսնում:

Չեռք-ձեռքի տված սարից իջանք վար,
Ու վազում էինք, թռչում քարից քար:
Մեր ճամփին վարդեր ծաղիկներ բազում,
Թուփ ու մացառներ ճամփա են բացում:

Քարե թագուհուց աչքս չեմ կտրում,
Նրա հայացքն եմ անընդհատ փնտրում:
Ծաղիկ ու ծաղկունք մեզ ճամփա տալիս,
Վարդեր են փնջում ու նրան տալիս:

Իսկ երբ կրքոտ համբուրեցի ես նրան,
Հրաշքի նման անհետացավ անվարան:
Լոկ համբույրս մնաց դաջված քարին լեռ,
Եվ դարերով այն կմնա դաջված դեռ:
27.02.2013 թ.

ԱՆՆԱ ԹՈՒՆՈՒՅՈՒՍ

Իմ չքնաղ Աննա, թոռնուհիս մանկիկ,
Երկիքից իջած կարծես վառ աստղիկ,
Աչքերում կայծեր, ցուլանքներ լույսի,
Նորահայտ պատճեն երկնախոհ լուսնի:

Հայացքով խոսում, դեմքով իր պայծառ,
Այն ո՛չ թե թուփ է, այլ ծաղկաբույր անտառ,
Այտերն էլ վարդի ալ թերթիկներ են,
Թարմ կակաչները նրա մոտ հին են:

Քայլերը թոթով, նրբին, կաքավիկ,
Հրաշք թոռնուհիս, ծագուկ մը փոքրիկ,
Էլ ի՛նչ թաքցնեմ, սրտիս զարկն է նա,
Չքնաղ թոռնուհիս, անուրը Աննա:

Բարով մեծացար իմ սիրուն թոռնիկ,
Դու, հովտաշուշան, ժայռածերպ ծաղիկ,
Քո համ ու հոտով ծիլ տաս, մեծանաս,
Հային արժանի դստրիկը դառնաս:

Կյանքում ապրես դու թագ ու պարծանքով,
Հայ ազգի դուստրի հանց կերպարանքով,
Ընկածին գթաս, հանց գթության քույր,
Աստղերիցն առնես պատասխան համբույր:

Քո պապիկն այսպիսի բախտ քեզ ցանկացավ,
Որ չունենաս կյանքում ո՛չ վիշտ ու ո՛չ ցավ,
Թոռնուհիս վճիղ, քաղցր ու անմեղ,
«Անահիտ» աստվածուհուն նա շատ է նման:
27.07.2018 թ.

112

ՀՈՎԻ ՇՈՒՆՉՈՒ

Հովերն ելան հով արեցին
Գարնաբ բացվող վարդերին,
Համբույրներս հետք թողեցին,
Ծաղկանց բացվող շուրթերին:

Ծաղիկ ծաղկունք սիրուն պես-պես
Բուրմունք տալիս ու բացվում,
Նրանք կարծես սիրածիս պես
Իմ գրկում են հայտնվում:

Ու սեղմում են սիրող սրտիս
Ծաղկեփունջը այդ թովիչ,
Համբուրում են նոր կյանք տալիս
Այլ շուրթերին գրավիչ:

Այս, Տեր Աստված, ի՞նչ սիրուն է
Այս գեղանին իմ գրկում,
Կարծես սրտիդ վառ գարունն է
Թովչանքներով աննկուն:

Այս, սիրելիս, ի՞նչ լավիկն ես,
Մեռնեմ քո ալ շուրթերին,
Դու, իմ հոգու զարդ տիրուհին
Իսկ ես՝ հավերժ քո գերին:
03.05.2012 թ.

ԳԱՐՈՒՆ ՄԵՐՍ

Երազներս տիրուհին
Ինձ այցի էր միշտ գալիս,
Դրանից է երևի
Որ սիրտս էլ չի՝ լալիս:

Տարիները մաշեցին
Սիրուս հույսի մատանին,
Ծերմակել է սիրուս ձին,
Եվ ծիավոր պատանին:

Սակայն սիրտս կարոտած
Իր յարին է լույս սիրում,
Անգամ թեկուզ ճերմակած
Մերս մանուկ է մնում:

Մերս մանուկ, ծերունի,
Արծալի թևեր մա ունի,
Թևեմ երկինքը մոկի,
Գրկեմ յարիս մտովի:

Մերս ժայռ է, սերս լեռ,
Մասիսների պես անմեռ,
Գազաթն անգամ թե ծնեռ,
Վառ գարունն է դաշտը դեռ:
07.10.2012 թ.

ԷԶՍՊՐՈՍՏ

Սիրուն աղջիկ ինձ մոտ արի,
Գիրկս առնեմ ու փարվեմ,
Իմ վշտերը ծովածավալ
Քո գրկի մեջ հար մարեմ:

Լինես դու գետ, ես քեզ՝ վտակ,
Արբեմ սիրո քո բույրից,
Իջնեմ հոգուդ խորքերն անտակ,
Հագնեմ քո համբույրից:

Գտանք իրար կամքից անկախ,
Քեզ կորցնել չեմ ուզում,
Անցնենք սիրո ծովերն անվախ,
Վառ հույսերով մեր բազում:

Եվ վրայով ալիքների,
Բազուկներով առնական,
Գիրկս առնեմ ու փախցնեմ
Իմ երազած աղջկան:

Ծովը լինի անծայրածիր,
Մեր երդումի լույս վկան,
Իսկ նայվածքդ մեզ ուղեծիր,

Թող որ փայլի մոգական:

Փարվեմ կրծքիդ վերքս բուժվի,
Հարկդ լսեմ կրծքիս տակ,
Աչքերիդ մեջ թող որ սուզվի
Ողջ աշխարհը բովանդակ:

ԻՆՉ ԿՈՒՋԵՒ

Մեկ կուզեի մեջլիս մտնել
Սայաթ-Նովի սազը առած,
Սիրունների գովքը երգել
Նրանց մտքի մասը դառած:

Մեկ կուզեի կրքոտ գրկել
Նազուկ մեջքը իմ յարի,
Ինձ զոհելով նրան փրկել,
Փակել ճամփան և չարի:

Մեկ կուզեի ուսիս թիկնոց,
Վանականի տեսքով սառած,
Հաղպատ մտնել դռները գոց,
Սայաթ-Նովի տեսքով հառած:

Մեկ կուզեի ինչպես Շիրազ,
Գովքը անել Մեծ Մասիսի,
Որ խառնվեն Ձանգու, Արազ,
Հայահավաք կանչով հույսի:

Մեկ կուզեի որ Սևակի
Պատարագված եռածայնով,
Կանչեմ այդ մեծ սիրերգակին
Անլուելի իր զանգերով:

Ի՞նչ էլ ուզեմ, սակայն, ինձ հետ
Վերջում ես էլ ես կմնամ,
Թե դարձել եմ արդեն պոետ,
Կամ բանաստեղծ, ի՞նչ իմանամ:
2010 թ. ք. Չարեմական

ԵՍ ԾՆԿԻ ԿԱՍՍ

Ես ծնկի՝ կգամ,
Նկարի առաջ խաչված Հիսուսի,
Փակ ճանապարհին գերված Մասիսի,
Որ ծայրս ինքը՝ Աստված էլ լսի,
Դեպ Արևմտյան Հայաստան տանող
ճամփեք բացի:
Կծկվեմ հանուր մարդկության առաջ
Ցեղասպանության
ճանաչման համար,
Որ դարեր զատված իմ ազգը կապի
Միացման կամար:

Ես ծնկի՝ կգամ,
Շիրիմների մոտ անմեղ զոհերի,
Թե ե՛տ տան խված հողերս գերի:
Ինչպե՛ս թե խված, գողացված կասեմ,
Վկա խոշտանգված Մասիսըս վսեմ,
Ավեր Անիս ցա՛վն ինչպես կիսեմ:
Աղոթքով կեղևեմ սարերը մովի,
Որ բացվի Վանա երկինքը ծովի:

Ես ծնկի՝ կգամ,
Մայրական ձեռքեր պագնելու համար,
Հայրական պատգամ առնելու համար,
Հիսուս կրառնամ խաչվելու համար,
Խառն քար կրառնամ
խաչքարի համար,
Հավիղ ձյուն՝ միայն ոռոգման համար,
Հանող սյուն՝

միայն կառուցման համար
Եվ սիրո կամուրջ կրառնամ այժմած,
Թե սիրող սրտերն իրար են հարմար,
Եվ հանդիպելիս չեն բաշխ հառաչ:
Երբ որ մաքուր է սերը, անաղարտ
Կասեմ. «Վերջապես
քո վախտը գտար»:

Ես ծնկի՝ կգամ,

Եթե ցնծության ջրանցքներ բացվեն,
Թե Վանից Սասուն, Հաճնից Երևան
ճամփաներ բացվեն, խոսքերն հերկվեն
Բաժանված սիրող սրտերը գրկվեն:

Ես ծնկի՝ կգամ,
Երբ որ Դեր Ձորը այգեստան դառնա
Հայ հողագործի վար ու հերկումով,
Ծովից ծով գոչե՛մ՝ նրա վանկարկումներով,
Իսկ թուրք յաթաղանին՝ իրեն անկումով:

Ես ծնկի՝ կգամ, կփարվեմ հողին,
Կըզկախառնվեմ իմ լեռ ու ժայռին,
Մենք իրար այսպես ամուր կպահենք,
Սիրով մեկ մեկու կյանքեր կփրկենք:

ՄԱՅՐԻԿԻՍ
(ողբ կորուստի)

Ինչքան հեռու, այնքան մոտ,
Սորս տեսքին եմ կարոտ:

Դու գետակ ես,
Որ ծովերը ծովանան,
Դու աղբյուր ես,
Որ սրտերը հովանան,
Դու քնար ես,
հավերժ երգող սմարիս,
Դու մայրաքար
Արի շունչ տուր քնարիս:
Դու գեփուռ ես,
Որ գովանանք քո հովից,
Դու մայր ծով ես,
Ու մենք հերթով սկիզբ առանք քո ծովից:
Դու բարի ես,
Որ դալարենք քո խոսքով,
Ի՞նչ մի չար ուժ ծածուկ չանցնի մեր կողքով:
Դու արծիվ ես,
Որ քո բույնը չեփիկ-չեփիկ հավաքել,
Ու թևերդ մեր վրա ես չվաքել:
Դու մի ծառ ես,
Քո ճյուղերով հազար բյուր,
Դու մի սար ես,
Մենք քո լանջին վարդ աղբյուր,
Աստվածային դու կենդարար կաթնաղբյուր:
Դու մի հյուր ես,
Սակայն, հոգիդ մշտաբուրն,
Դու համբույր ես,
Պաշտիկներով անարատ,
Խորհուրդներդ՝
Ընդունում են հանց խրատ:
Դու մատուռ ես,
Քեզ մոտ կգամ աղոթքի,
Ու կծնկեմ,
Ինչպես որդին՝ «Մայր» սրբին:

Դու իմ մայրն ես, սիրառատ,
Քո մայրական մուրք սրտով,
Ես քո որդին
Միշտ քո գրկին կարոտով:
Դու մեծ վանք ես,
Գլխիդ դրված սուրբ խաչով,
Թող համբուրենք
Նուրբ ձեռքերդ մեր պաշով:
Դու մի մոմ ես,
Որ հավելի՛վ էս լույս տալիս,
Մայր իմ անգին,
Որդիդ քո գրկին է գալիս:
06.09.1998 թ.

ԵՐԿԻՐ ՀԱՅԱՎԱՆ (հիմն)

Դու հայոց երկիր Վան ու Սասունի,
Եվ զին Կիլիկիան, որ քո մասն ունի,
Բազում ազգերի շարքով աստվական
Կան ու կիցնես երկիր հայկական:

Մենք ենք քրիստոնե երկիրն առաջին,
Մեսրոպյան տառ ու գրով մեր անգին,
Արարատ սարը փառքով պատվական
Իր շուրջն է առել հողերն հայկական:
Արցախից մինչև ափերը Վանա,

Ջավախքից Կարին, Ջեյրան, Աղանա,
Սշո դաշտերն են ու Տարոնն առնական
Եղել են ու կան երկիրն հայկական:

Վտակն էլ սփյուռքն է հայոց մեծ գետի,
Մենք բնիկներս հայ Միջագետքի,
Դու կապրես դարեր հավերժ, պատվական,
Իմ հայոց աշխարհ, երկիր հայկական:

Թող հայոց բախտի արևը շողա,
Մեր հողի վրա ընդմիշտ, տևական,
Եվ եռագույն դրոշմ հավերժ փողփողա
Իր վառ գույներով, ոգով հայկական:
15.03.2003 թ., ք. Երևան

ԿՈՄԻՏԱՍԻՆ

Մեծ Կոմիտասի նկարի առաջ,
Խորհում եմ տխուր

ու քաշում հառաչ:
Եվ նկարի մոտ Մեծ Կոմիտասի
Նայում եմ մոլոր թե ինձ ի՞նչ կասի:
Սակայն նկարը ոչինչ չի ասում,
Խելագար վազքով առաջ է վազում:

Վազում է ցնորի, մտքերը մոլոր
Մահ ու սարսափ է իր շուրջը բոլոր:
Դժոխք էր ճամփան, ինքը խելագար,
Չկար ոչ մեկը, որ նրան մոտ գար:
Չկար ոչ մեկը, տեսիլք էր կարծես,
Վազում էր ցրված խելագարի պես:
Ումի՞ց կամ ինչո՞ւ, ոչ ոք չգիտեր,
Լոկ Աստված էր, որ վերից կոխեր:
Կոխեր, սակայն ծախում չէր հանի,
Հայոց մեծ վիշտը իր հետ կտանի:

Վազում էր, վազում սևահեր, ցրված,
Պատմության բախտի
անրիկն տրված:
Խելագար վազքով թռչում էր առաջ,
Անեծք էր շաշում ու ողբում շառաչ:
Գայլաղեն մարդկանց
ոխից սարսափած,
Անթաղ դիերի հոտերից հարբած,
Վազում էր, վազում...
Դժոխք էր կարծես իր շուրջը բազում:

Մի տեղ հեծկտող
մանուկներ, մայրեր,
Ողջ երկիրն ասես դժոխքի վայր էր:
Ջարդված, փշրված պղնձե զանգեր,
Անտեր ու անթաղ
բյուր հազար զանգեր:
Մի տեղ՝ անվերջոյթ, անզուխ իրան,
Մի տեղ՝ մազափունջ
կախ ընկած դռան:
Մի այլ տեղ՝ կմախք չորուկ իրանի,
Խրված մի նետ մեջ բերանի:
Մի տեղ՝ ստիճք էր քառակի հատված,
Իսկ որովայն էլ ցիր ու ցան արված:
Մի այլ տեղ՝ ձեռքեր մանկանց թոքով,
Հատված ոտքեր նորաթոթով:

Ու նա վազում էր աչքերում արյուն,
– Ո՛ր եք, հայոց վագր ու կորյուն:
Մի՛ թողեք, հայոց ազգը որ մարի,
Կոմիտասն էլ խելագարվի:
Բայց էլ ինչպես մա չգժվեր,
Երբ դեռ մահն ինքն էր՝
փաշան Էնվեր:
Ամենուրեք մահ էր սփռում,
Դժոխք դարձած մարդ հալածում:
Ժանտ հայացքներով
իրար հետ խոսում,
Հազար դիակներ մի փոսում լցնում:
Կենդանի մարդկանց
անարգում, թաղում,
Եվ հողաթմբին նարդի էին խաղում:

Էլ ո՞նց չգժվեր, չխելագարվեր,

120

Հայրենին երբ որ դարձել էր ավեր:
Ով թուրք արմախում, վրեժ քո ցեղին,
Անեծք են գրում քո բիրտ ճակատին:
Անիծում են քեզ, լեզուդ համարանա,
Թախաբներ ծնող արգամդն ամլանա:
Էնվերի պես բիրտ ու անմարդկային,
Օսմանյան հողում հազարներ կային:
Որդե՛րն էլ, սակայն, բյուր են մայր հողում,
Բայց հողագործի բահից են դողում:
Թուրքը դողալու իսկ չուներ պատճառ,
Անորեն թուրքին կոզներ եվրոպան:
Թուկն իր ձեռքում էր, ինչ կուզեր կաներ,
Անգամ մի ողջ ազգ տեղահան կաներ:
Եվ թուրքի փախած խուժանն այդ անտեր
Հայոց աշխարհում վանքեր կբանդեր:
Տեսնելով այսքան արյուն ու ավեր
Վարդապետն ինչպե՛ս չխելագարվեր:

Կարմիր էր եփրատն իր գույնով դարձել,
Կույս աղջիկներին էլ քարավան բարձել,
«Բարձր Դուռ» էին բռնությամբ տանում,
Իսկ համառողի բիբերը հանում,
Գազազած դիտվ,
Բռնաբարում էին կույսին ամբոխով:

Владимир КИРАКОСЯН**Приходи**

Приходи, милая, останься, не уходи,
Мы кофе попьём и будем молчать.
Теперь, когда кажется — счастье позади,
Может, попробуем все снова начать?

Приходи, моя кареглазая лань,
Девушка с кувшином моей мечты.
Жизнь моя без тебя — унылая дань,
Горькой тоски моей причина ты.

Пусть ветром уносит все, что было раньше,
Приходи, попробуем все снова начать.
Посидим у огня, помолим о своём —
С тобой интересно даже молчать!

Помолчим и тихо прошлое забудем,
Пусть судьба насладится ею всласть,
И мы с тобой снова разбудим
Нашу пропавшую былую страсть!
2005 г.

*Перевод Ольги Герман.***Грустный романс**

Осенний ветер стучится в окошко
И поёт свой старинный романс,
А слова те с грустинкой немножко
И написаны будто о нас.

За окном мелкий дождь мелодично
Барабанит нам скучный мотив,
В такт берёза качает ритмично
Свои ветки, о дубе забыв.

Վա՛յ տամ ձեր գլխին, դուք ա՛զգ եք կոչվում,
Երբ մահ ու արյան հետ եք համբուրվում:
Անեծք շանատակ, շեթան Թախաբին,
Բյուր հազար անեծք թուրք յաթաղանին:
Միլիոն ու կեսի վիշտը իր սրտում,
Օրմիբուն կքած աղոթք էր կարդում
Մեծն Կոմիտաս,
Որ ազգին հայոց Աստված դու՛ գթաս:
Գոնե որ գթաս քո ստեղծածներին,
Զե՛ր որ Արարիչ ստեղծող ու ծնող է կինը:
Աստված, բնություն, և կինն է կյանք տվող,
Նրանց հետ չափվել ոչ ոք չի՝ կարող:
Իսկ ցավ ու վիշտը, սիրտը մայրական,
Զի ամոքելու ոչ մի շարական:
Ինչպես երկինքը, անծայր ու անտես,
Սերը հայրենյաց, դու ո՞նց կբանտես:
Ինչպես կբանտես, ո՛վ դու սրտամեծ
Հայոց թագավոր Մասիս ալեհեր,
Հարյուր տարի է, բայց գերված է դեռ,
Ինչպես որ գերված հոգիներն անմեռ:
Հոգիներն անմեռ, անմեղ զոհերի,
Այդպես էլ մնացին հավիտյան գերի
Մեր հողերն Հայքի,
Ողջ արևմտյան մասն Հայաստանի:

Կոմիտասն անգոր խելագար ճիգով

Мне тебя не забыть, дорогая,
Не забыть этот грустный романс,
И прошу тебя, помни, родная,
Те слова, что пел ветер для нас.
2005 г.

*Перевод Ольги Герман.***Моя Армения, тебя я прославляю**

Моя Армения, тебя я прославляю,
Сасун и Ван, Киликию мою!
На ратный подвиг ты армян благословляла,
Чтоб грудь защитили честь твою!

И первая страна ты христианская,
Где письменность Маштоца родилась,
Земля моя, любимая, армянская,
Где кровь людей за правду пролилась.

Как мне милы Карин, Зейтун, Тарон,
Долина Муш, мила мне Адаман!
Дiasпоры армянского народа
Разбросаны по дальним сторонам.

Подёрнут сизой дымкой Арарат,
Вокруг него армянские просторы,
Они мне дороги, как мать, отец и брат,
Спаси нас Бог от войн, беды, раздоров!

Трёхцветный стяг колыхает ветер с гор,
Пусть вечно реют флаги над страной,
Пусть превратится в рай наш Цахкадзор,
Мой край живёт счастливою судьбою!
2005 г.

*Перевод Ольги Герман.***ВЗГЛЯД В БУДУЩЕЕ 2**

(Шутливая пародия)

Вдруг доживу до 90 лет,
Старушку встречу и скажу: «Привет!»
Спрошу: «Ты помнишь, как любил тебя?»
В склерозе старая, не вспомнила меня...

Я ей талдычу про любовь свою,
Что в сей же миг я на коня вскожу,
Бабульку милую с собою захвачу,
И страсть горячую на ранчо подарю.

Перецелую всюду и везде,
И конь от зависти заржет в узде...
Да только бабушка не вспомнила меня,
Эх, размечтался вовсе я зазря.

*Перевод Артура Киракосяна.***О БЫСТРОТЕЧНОСТИ ЖИЗНИ...**

Жизнь, как быстротечная река,
Пролетают годы-берега,
Жаль, что не дано прожить века,
Дотянуть бы мне до «старика».

У кого-то жизнь огромная, как море,
У иных вдруг обрывается в начале,
Оставшая близких в жгучем горе,
В безграничной, искренней печали.

И идут на смену поколения,
Кто-то оставляет яркий след.
Жизнь иных — сплошное сожаленье,
Недоразуменье, слёзы или бред.
05.2012 г.

Перевод Артура Киракосяна.


50

ԳՈՐԾՆ Է ԱՆՄԱՀ

բոլորիս՝ քաղաքապետարանի չինովիկների, ճարտարապետություն, գեղագիտություն, ճաշակ, ներդաշնակություն, անվտանգություն և նման կարգի այլ հասկացությունների, վերջապես՝ վանաձորցիների նկատմամբ: Ինչպես ջահելները կասեն՝ սա, իրոք, վերջն է: Այդ «դուարյաթուկին» մարդիկ անսիրտապես «կոնյուշին» անվանեցին: Չենք կարծում, թե այն որպես ձիանոց է ծառայելու: Գյուղատնտեսության զարգացման այդ արգասաբեր ճյուղը՝ ձիաբուծությունը, Լոռու մայր քաղաքում զարգացնելու նպատակով քաղաքապետարանի տրամադրության տակ ուրիշ հարմար տարածքներ

կան գլխավոր հրապարակից դարձյալ ոչ հեռու: Կասկած չունենք, որ հարկ եղած դեպքում կտրամադրվեն: Առաջներում ասում էին տրամադրվում են կոռուպցիոն սխեմաներով: Հետաքրքիր է՝ հիմա ի՞նչ սկզբունքներով են տարածքներ բաշխվում: Հիմա, երևի, «սիրուն աչքերի համար»: Իսկ որպես ի՞նչ է ծառայելու այդ շենքը, ո՛վ է կառուցողը, ո՛վ, ովքե՛ր են թույլատրել կառուցել, ինչու՞ դատախազությունը չի զբաղվում ակնառու անօրինականության բացահայտմամբ՝ թե ո՛վ, ի՞նչ հնարամտությամբ և հեռահար նպատակներով, ինչ չնչին գումարով է ժամանակին բոլորիս պատկանող հանրային այդ կենսատարածքը ապօրինաբար իրենտվ արել, այսինքն՝ սեփականաշնորհել:


Պապիկ ԱՆՏՈՆՅԱՆ



Այվազովսկի. Հայը

Մեծ ծովանկարիչը բազմիցս է նկարել իր անծով հայրենիքը


Հովհաննես Այվազովսկուն համարում են ռուս ծովանկարիչ և դա քննարկման թեմա չէ։ Անշուշտ, նա ռուսական արվեստի, գեղանկարչական դպրոցի ու միջավայրի ծնունդ է։ Նա, իրավամբ պատկանում է ռուսական մշակույթին, սակայն նկարչի ստեղծագործական դեմքն ու դիմագիծն, անկասկած, յուրօրինակ ու հետաքրքիր է դարձնում նրա ազգությունը։ Հայկական արմատներն ու հայի նրա տեսակն ամենուր է։



Այվազովսկին իր հուշերում գրում է. «Երբ ես ութ տարեկան էի, հայրս պատմեց, որ կա երկիր, որտեղ ծով չկա։ Ես ասարափելի վախեցա ու լաց եղա։ Ինչպե՞ս կարող է այդպիսի մղձավանջ, ապրել առանց ծովի... Իսկ նավել ըր... նավերն առանց ծով ոչ մի կերպ չեն կարող լինել։ Իսկ մարդը : Մարդն առավել ես...»:

Մանկության տարիներին ասարափելի թվացող առանց ծովի երկիրն, արդյոք բացահայտեց Հ. Այվազովսկին։ Ոչ ոք չգիտի... Որոշ աղբյուրներ պատմում են, որ նա Անդրկովկաս ճամփորդելիս եղել է նաև Հայաստանում, սակայն որևէ հիշատակություն կամ հետք այդ այցից չի հասել

մեզ։ Միակ հետքերը նրա Հայաստանին ու հայրենին նվիրված իր նկարներն են։ Մեծ ծովանկարիչը բազմիցս անդրադարձել է իր անծով հայրենիքին։ Նա պատկերել է Սևանա լիճը, Արարատը, Արարատյան դաշտը, հայկական կենցաղն ու հայ մարդուն։ Հայոց պատմության բազմաթիվ դրվագներն ու աստվածաշնչյան թեմաները նույնպես գրավել են Այվազովսկու ուշադրությունը։



3. Այվազովսկի «Սևանա լիճը», 1889


Դավանելով Հայ Առաքելական եկեղեցուն, նա ողջ կյանքում հավատարիմ է մնացել իր եկեղեցուն ու հավատքին։ Դրա վկայություններին մեկն էլ Թեոդոսիայի Սբ. Մարգիս հայկական եկեղեցին է, որտեղ ոչ միայն գրանցել են Հովհաննես Այվազովսկու ծնունդը, այլ նաև այստեղ է մկրտվել, պսակադրվել ու թաղվել մեծ ծովանկարիչը։



3. Այվազովսկի «Նոյն իջևում է Արարատ լեռից», 1870

Այվազովսկու հայկական ակունքների ու հայկական տեսակի մասին է խոսում նաև նրա ծայրահեղ հյուրասեր ու հյուրընկալ

բնավորությունը։ Նրա դրիմյան տան հյուրերն են եղել կայսրուհուց սկսած, մինչև գեներալներ ու պետական գործիչներ, աշխարհահռչակ արվեստագետներ ու մտավորականներ։ Մական, նա առանձնակի գործվանքով է հյուրընկալել իր հայրենակիցներին։ Այստեղ օրերով ու ամիսներով ապրել են նկարիչներ Գևորգ Բաշինջադյանը, Վարդգես Մուրեյանցը, Վարդան Մախոխյանը, Արսեն Շաբանյանը, Էմանուել Մահտեսյանը, կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանը, դերասան Պետրոս Ադամյանը և էլի շատ հայորդիներ։ Նրանց բոլորին Այվազովսկին օգնել ու աջակցել է յուրովի։ Մեկին ֆինանսապես, մյուսին հոգեպես, երրորդին խորհուրդներով... բոլոր նրանք, ովքեր որևէ խնդրանքով դիմել են Այվազովսկուն, երբևէ անպատասխան չեն մնացել։



Ինքնադիմանկար, 1889

Մեծ ծովանկարչի մահից հետո, երբ Պետերբուրգի Ռուսական երաժշտական ընկերությունում կատարել է Ալեքսանդր Սպենդիարյանի «Ղրիմյան Էսքիզներ» սյուիտը, հեղինակը կատարումից առաջ հայտարարել է, որ իր ստեղծագործությունը նվիրում է Հովհաննես Այվազովսկուն։ Համերգից հետո կոմպոզիտորը իր արարքը բացատրել է այսպես.

«Ղրիմյան Էսքիզներ» ծնունդը ես ավելի շատ պարտական եմ իմ մորը, որը վաղ տարիքից սեր արթնացրեց իմ մեջ երաժշտության հանդեպ... Բայց Այվազովսկին էլ իմ մեջ դաստիարակեց հային, սեր դեպի հայրենին... Եթե միայն իմանաք, թե ինչպես էր Իվան Կոստանտինովիչն ուրախանում հայկական հանճարի ամեն մի դրսևորմամբ։ Նա առաջինը Ռուսաստանում ողջունեց Պետրոս Ադամյանին և ամեն ջանք գործադրեց, որպեսզի ռուս հասարակությունը ճանաչի այդ մեծ դերասանին։ Հապա խոսեցրեք մեր մեծ նկարիչներին՝ Բաշինջադյանին, Մուրեյանցին, Մահտեսյանին։ Նրանք ասում են, որ


140

Այվազովսկու նվիրական իղձն է եղել համախմբել բոլոր հայ նկարիչներին: Իսկ երբ մենք Բվան Կոնստանդնուպոլիսի հետ նստած նվագում էինք, նա շարունակ իմ ուշադրությունը բևեռում էր հայկական մոտիվների վրա: Դրա համար էլ իմ պոլիտը նվիրեցի նրա հիշատակին:



«Երդու Ավարայրի ճակատամարտից առաջ», 1892

Այվազովսկին հայ ժողովրդի զավակն էր և երբեք չէր թաքցնում իր ազգային պատկանելիությունը: Նա անսահման ուրախանում էր հայերի հաջողությունից ու նույնքան տանջվում նրանց կրած տառապանքներից: Նա որպես իսկական հայ խորապես մտահոգված էր իր ժողովրդի ճակատագրով:




Ամենայն Հայոց կաթողիկոս Իրիմյան Հայրիկը Էջմիածնի մոտակայքում, 1895

Ըստ ականատեսների, 1895 թ. Թուրքիայում հայերի կոտորածների մասին լուրերը

ցնցել են մեծ նկարչին այնքան, որ նույնիսկ կտրուկ վատթարացել է նրա առողջությունը: Դրիմից նա փորձել է գումարով աջակցել հայ գաղթականներին, օգնում նրանցից շատերին հաստատվել Լրիմում: Նյուլական օգնությունից բացի, Այվազովսկուն խնդրել են նաև վրձնով պայքարել արյունաբեր մարդասպանների դեմ: Նրան այս հարցով Էջմիածնից դիմել է Կաթողիկոս Իրիմյան Հայրիկը, ում ի պատասխան Այվազովսկին գրել է.


Ձերդ սրբազնություն, ինձ համար մեծ պատիվ է կատարել Ձեր խորապես հուզումներից առաջարկը. արյունոտ գույներով նկարել հայկական ջարդերը, կարմիր ներկված դաշտերն ու լեռները և հայրենի ավերակների վրա ողբացող Իրիմյան Հայրիկին: Եթե աստված կամենա էլի կյանք պարգևել ինձ, ապա կգա օրը, երբ կկատարեմ իմ սիրտն այնքան հուզող Ձեր առաջարկը: Այո, Ձերդ սրբազնություն, խոր վշտով է համակված իմ հոգին դժբախտ հայ ժողովրդի այս չլաված ու չտեսնված ջարդերի համար...



Այվազովսկու նամակը Իրիմյանին, 1886

Այնուհետև Հ. Այվազովսկին իր նկարների վաճառքից ստացված միջոցներով Արևմտյան Հայաստանում հիմնել է 12 ման-

կատուն: Անարդարության դեմ պայքարելու անգործությունից դրդված և որպես թուրքական իշխանության դեմ ցամաքում ու բողոքի նշան, նա իր շան վզից կախել է սուլթան Աբդուլ Համիդից ստացած օսմանիե ադամանդագծ շքանշանները, նրա հետ քայլել Թեոդոսիայի փողոցներով, ապա շան վզից հանելով դրանք նետել է ծովը: Իսկ թուրքական հյուպատոսին պատվիրել է իր «արյունոտ» տիրոջը փոխանցել. «Եթե ցանկանա, թող նա էլ ծովը նետի իմ նկարները: Ես չեմ ափսոսա նման կոտորածը»:



Սրան հաջորդել է նրա «Հայերի ջարդը Տրապիզոնում», «Թուրքերը հայերին լցնում են շոգենավը», «Թուրքերը հայերին նետում են Սարամարա ծովը» նկարների ծնունդը, որոնք նա ուղարկել է Պետերբուրգ՝ «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին» ժողովածուում հրատարակելու համար: Թուրքերի իրականացրած ոճրագործությունները պատկերող Այվազովսկու կտավները ցուցադրվել են Ռուսաստանում, Անգլիայում, Ֆրանսիայում, Եվրոպական բազմաթիվ քաղաքներում, ամենուր առաջացնելով թուրքական զավաճությունների նկատմամբ բողոքի ու զայրույթի, հայերի նկատմամբ սիոփանքի ու ցավակցության ալիք:

Նաիրա ԵՐԿԱՆՈՐՅԱՆ

ՉՎԱՐԹՆՈՑ ԱՆՎԱՆ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՉՎԱՐԹՆՈՑ ԲԱՌԻ ԼԵՉԱՎԱԿԱՆ ԿՈՐՄԻ ՄԱՍԻՆ

Հավանաբար շատերին է հետաքրքրում, թե ինչ է նշանակում «Չվարթնոց»:

Չվարթնոց բառը հայերենը ժառանգել է գրաբարյան «զուարթուն» ձևից, որը ունի «հրեշտակ» (տե՛ս Հայկազյան լեզվի բառարան), «արթուն հսկող» (տե՛ս Գրաբարի բառարան, Ռուբեն Ղազարյան) նշանակությունը: Իսկ –ոց-ը, ինչպես գիտենք, տեղ ցույց տվող վերջածանց է: Այսինքն՝ Չվարթնոց նշանակում է զվարթունների՝ երկնային գորույթիների, ասել է, թե հրեշտակների հավաքատեղի:

Տաճարին այդպես է կոչել պատմիչ Սեբեոսը. «Այնտեղ կառուցեց մի եկեղեցի՝ երկնավոր «Չվարթնոց» անվամբ, որը նշանակում է երկնային գիևկորների (զվարթունների, կամ հրեշտակների) բազմություն, որոնք երևացել են Սուրբ

Գրիգորին տեսիլքի ժամանակ:


ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՐԵՎԱՆԻ

ՕՊԱՆԱՎԱԿԱՅԱՆԸ ԿՈՉՎԵՏ ՉՎԱՐԹՆՈՑ

Այստեղ ուզում եմ նաև ներկայացնել մի պատմություն, թե ոնց Կարեն Դեմիրճյանը «հաջողացրեց», որ օդանավակայանն անվանվի Չվարթնոց:

Կառուցումից ի վեր օդանավակայանը կոչվում էր Արևմտյան օդանավակայան: Հայաստանի կոմկուսի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանի համար օդանավակայանի անվան հարցը իրական խոչընդոտ էր: Այդ թվականների Հայաստանի ավիացիայի գլխավոր վարչության պետ Դմիտրի Արաբաշյանի հուշերից տեղեկանում ենք, որ աշխարհում չգրված օրենքի համաձայն՝ օդանավակայանի անունը

Թե ինչպես այրեցին «Հայկական սեպագրերի վերծանումը» գրքի օրինակները Գիտությունների ակադեմիայի բակում



Սուրեն Այվազյան՝ արտասովոր գիտնականը և անխուշ գործիչը

Աստվածատուր շնորհքներով այս մարդը կարծես թե ուզում էր վեր հանել տիեզերքի բոլոր գաղտնիքները: Նա աշխարհ էր եկել բազում մեծարժեք հայտնագործություններ անելու...

Նա այն հազվագյուտ գիտնականներից էր, ում գործունեության և հետաքրքրությունների ոլորտը միանգամից անհնար է թվել և առավել ևս ներկայացնել, քանզի բազմաբնույթ են և այնքան խորը, որ հասնում են հարազատ ժողովրդի ակունքներին և ձգվում դեպի մարդկության պատմության խորքերը:

Սուրեն Միքայելի Այվազյանը ծնվել է 1933 թ-ին Թիֆլիսում՝ մտավորականի ընտանիքում:

– Հորս հարազատ գյուղը մինչև վերջին ժամանակներս Շահնագար անունն էր կրում: Այժմ այդ գյուղը կոչվում է Մեծավան: Գյուղի ամենալավ բանը նրա մարդիկ են, – գրում է գիտնականն իր հուշերում և ավելացնում, որ իրենց նախնիները մշեցի են:

Սուրեն Այվազյանի հայրը՝ Միքայել Այվազյանը 1915 թ-ին տնից փախել և միացել է գորավար Անդրանիկի ջոկատին: Տեսնելով 14-ամյա պատանուն դաշույնը գոտուց կախված՝ Հովի. Թումանյանը նրան անվանել է «ծուռ լուեցի»:

Գիտնականի մայրը՝ Կարոյիթեր Հեքեթյանը, Հեքեթյան հայտնի տոհմից է և եղել է Ռոմանոս Մելիքյանի աշակերտուհին: Միքայել Այվազյանը Թիֆլիսում աշխատել է որպես «Մարտակոչ» թերթի քարտուղար, այնուհետև՝ որպես Ստեփան Շահումյանի ներկայում՝ Պետրոս Աղամյանի անվան դրամատիկական թատրոնի ադմինիստրատոր: Հենց այդ թատրոնի երախտավոր Արտեմ Լուսինյանի խորհրդով՝ 1952 թ-ին ոսկե մեդալով ավարտելով դպրոցը՝ Սուրեն Այվազյանը, որոշեց երկրաբան դառնալ՝ ընդունվելով Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանի երկրաբանական ֆակուլտետը: Հուսով երկրաբան Այվազյանի տաղանդը փայլատակեց մի շարք ասպարեզներում: Ապշեցուցիչ է, սակայն նա դարձավ նաև երկրաֆիզիկոս, երկրաքիմիկոս, աստղաֆիզիկոս, պատմաբան, հնէաբան, քարտեզագետ, լեզվաբան, գրող, բանասիրական, ազգագրագետ, գիտության և տեխնիկայի մասնագետ:

Սուրեն Այվազյանի եղբայրը՝ Հրաչյա Այվազյանն ավարտել էր Թբիլիսիի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1957 թ-ին ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի հատուկ որոշմամբ Այվազյան եղբայրներն ընդգրկվեցին ԳԱ կիրառական ֆիզիկայի էլբրուսյան արշավախմբի կազմում: Այստեղ նրանք հայտնագործեցին նոր երկրաբանական ինֆրակարմիր ալիքներ՝ խոշոր գյուտ անելով հրթիռ որսացող սարքավորումների բնագավառում, որի համար արժանացան Պետական գաղտնի մրցանակի, իսկ Հրաչյա Այվազյանն այնուհետև դարձավ Լյուծրքի Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ: Այդ ուղղությամբ, հետագայում՝ 2006 թ-ին Ռուսաստանի Դաշնության բժշկատեխնիկական գիտությունների Ակադեմիայի կողմից Սուրեն Այվազյանը պարգևատրվեց ոսկե մեդալով:

– Ազատ արվեստագետի դերը գիտության մեջ ինձ շատ էր ձգում, – խոստովանում էր արդեն երկրաբանական և ֆիզիկամաթեմատի-

կական գիտությունների դոկտոր, աշխարհի չորս ակադեմիաների իսկական անդամ Սուրեն Այվազյանը: 1959 թ-ին տեղափոխվելով Երևան գիտնականն աշխատեց ԳԱ-ի նախագահությունում՝ որպես կրտսեր գիտաշխատող: Այնուհետև ձեռնամուխ եղավ հայկական սեպագրերի վերծանման գործին, որոնք կարգաց մինչ այդ չհայտնաբերված նախագրաբանական լեզվով: 1963-ին հրատարակեց իր առաջին խոշոր մենագրությունը՝ «Հայկական սեպագրերի վերծանումը», որի գրեթե բոլոր օրինակները հավաքվեցին և այրվեցին Հայաստանի Խորհրդային Հանրապետության Գիտությունների Ակադեմիայի բակում, որպեսզի մեր հարևանները չնեղանային իմանալով հայկական վաղնջական պետականության ու մշակույթի մասին: Հայկական սեպագրերի վերծանումը ցույց տվեց, որ հայերենից զատ, հայերենից տարբերվող ուրարտական լեզու գոյություն չի ունեցել, որ հայկական սեպագրերի լեզուն հենց սեպագիր շրջանի հնագույն Հայաստանի լեզուն է, որ բոլոր վերծանված բառերը, անուններն ու աշխարհագրական անվանումներն ունեն հայկական արմատներ: Սակայն, ուրարտագետ Բորիս Պիոտրովսկուն ապացույցներ էին պետք:

– Եթե կա Մովսես Խորենացու Հայաստանը՝ ապացուցի՛ր:

Սուրեն Այվազյանը չհապաղեց: Հայկական սեպագրերի վերծանումից երեք տարի անց նա կատարեց դարի հնէաբանական խոշորագույն հայտնագործություններից մեկը, ինչն այսօր գրեթե ոչ մի տեղ իր անվամբ չի հիշատակվում: Տաղանդալատ գիտնականը հայտնաբերեց մի հնավայր, որը հոսող գետի անվամբ կոչեց Մեծամոր՝ ապացուցելով որ այն Ք.ա 3-րդ-ից 1-ին հազարամյակների հայկական երկրի պատմությունն է, որ հանքամետաղագործական խոշոր այդ համալիրը հանքահարստացման և ձուլման չափերով հավասարը չունեի որչա՞հին Արևելքում: Մեծամորն անմիջապես իր վրա բեռեց համաշխարհային գիտական հասարակության ուշադրությունը: Մեպագրերի վերծանումը և Մեծամորի դարակազմիկ հնագիտական հայտնագործությունները հայագիտության ասպարեզում հեղաշրջում կատարեցին խորացնելով մեր պատկերացումները Հայասա հնագույն պետական կազմավորման մասին: 1963-1970 թթ-երին Այվազյանը Մեծամորի մասին տասնյակ հոդվածներ և մի մենագրություն տպագրեց: Այս ամենի համար նա արժանանացավ պետական մրցանակի և պարգևատրվեց ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի պատվոգրով:

Չափազանց ուշագրավ են գիտնականի այն աշխատությունները, որոնք վերաբերում են հիերոգլիֆների վերծանմանը և աշխարհի այբուբենների համեմատական ուսումնասիրություններին: 1960 թ-ին ակադեմիկոս Վասիլի Ստրուվեի հանձնարարականով Այվազյանը հրատարակեց իր «Հիքսոսներ» աշխատությունը՝ համարձակ մի խոսք հայագիտության մեջ: Այստեղ ասվում է, որ Ք.ա. 1710 թ-ին Եգիպտոսը նվաճած հիքսոսները, որոնք հյուսիսից էին գնացել, երկաթ էին ձուլում և ամուր գեղք ու զրահ կռում հայերի նախահայրերն էին՝ Հայք-Հայասա երկրից: Դրա կարևորագույն ապացույցներն էին Մեծամորում հայտնաբերված գաղափարագրերն էին, որոնք հիքսոսյան, ինչպես նաև Մասենա-դարանում պահվող հին ձեռագրերի գաղափարագրերի հետ համեմատելիս ակնհայտ է դառնում, որ դրանց միջև գոյություն ունի ծագումնաբանական կապ:

Հենկելով պատմական արժեքավոր հայտնագործությունների վրա՝ Այվազյանն ուրիշ համարձակ տեսություններ էլ է առաջ քաշում, որոնցից մեկն էլ՝ արիացիների (հնդեվրոպացիների) նախահայրենիքի հայկական լեռնաշխարհ լինելն է:

Բեղմավոր գիտնականն իր աշխատանքի արդյունքում ստեղծել է շուրջ 300 գիտական աշխատություն և 36 մենագրություն, որոնց մեջ կարևորվում են նաև բնական գիտությունների ոլորտում կատարած նրա հեղաշրջիչ հայտնագործությունները: Մեկ տարում՝ 1966-67 թթ-ին նա նոր ուղղություն բացեց երկրաքիմիայի ասպարեզում՝ հիմնելով գիտության նոր բնագավառ միջուկային երկրաքիմիական-արժեքային իզոտոպների նմանության շարքերը: 1968 թ-ին Մոսկվայում պաշտպանելով իր գիտական ատենախոսությունը Սուրեն Այվազյանը ստացավ երկրաբանահանքաբանական գիտությունների թեկնածուի կոչում: 1972-73 թթ-ին ստեղծեց ֆիզիկական մաթեմատիկայի նոր ուղղություն՝ ձգողական դաշտերի

160

մաթեմատիկա: 1973-ին՝ դարձյալ Մոսկվայում՝ իր «Երկրագնդի կազմավորումը» մենագրության համար ստացավ ֆիզիկամաթեմատիկական դոկտորի կոչում: 1974 թ-ին գիտնականը հայտնագործեց նյութերի կոնցենտրացիան պրոցեսները տիեզերական օբյեկտներում ցույց տալով գալակտիկայի էվոլյուցիոն զարգացման ընթացքը: 1976 թ-ին դարձավ Էներգետիկ ինվերսիաների հասարակական միջազգային Ակադեմիայի անդամ, այնուհետև ևս երեք Ակադեմիաների Հայկական տեխնոլոգիական Ակադեմիայի, ՌԴ բժշկատեխնիկական Ակադեմիայի և Կանադայի Բնֆորմատիկացիայի միջազգային Ակադեմիայի: Վերջինի մասին պետք է ասել, որ համաշխարհային հզոր գիտական կառույց է, որտեղ ընդգրկված է աշխարհի քաղաքական և գիտական ընտրանին:

1966-1988 թթ-ին Ս. Այվազյանն աշխատել է գունավոր մետալուրգիայի գիտահետազոտական ինստիտուտում՝ որպես գիտատեխնիկական ինֆորմացիոն բաժնի վարիչ՝ հրատարակելով ինստիտուտի գիտական աշխատությունների ժողովածուները: Վիրթսարի ներդրում կատարելով աստղաֆիզիկայի բնագավառում՝ Այվազյանն իրեն լիովին հաստատեց այդ ասպարեզում՝ 1995-ին ստեղծելով «Հնգաչափ կոնսիսիդուումի կոորդինատների բացարձակության տեսությունը», որտեղ Էյնշտեյնի հարաբերականության տեսությունը հանդես է գալիս որպես մասնակի դեպք:

1980 թ-ին Հայաստանի արտաքին գործերի նախարար Ջոն Կիրակոսյանը Սուրեն Այվազյանին հանձնարարեց ստեղծել Հայաստանի պատմական քարտեզների հավաքածու, քանի որ ԽՍՀՄ ղեկավարներն ասել էին, որ Հայաստանի անցյալի մասին ոչ մի պատկերացում չունեն: Օրական 18-20 ժամ ոգեշնչված աշխատելով՝ օգտագործելով Խորենացու պատմությունը, խեթական, ասոր-բաբելական, հին պարսկական, հին արաբական, հին հնդկական հիերոգլիֆային և սեպագիր տվյալները, երեք ամիս անց Ջոն Կիրակոսյանի սեղանին դրվեց 50 քարտեզից բաղկացած ատլասը, որն ընդգրկում է Հայաստանի հնագույն և հին ժամանակները՝ մ.թ.ա. 2107-ից մինչև մ.թ. 428 թթ-ը, որտեղ երևում է, որ Բ.ա. 1824 թ-ից Հայաստանը գոյություն է ունեցել որպես պատմաաշխարհագրական և քաղաքական միավորում՝ իր երեք մասերի կազմության մեջ՝ Մեծ Հայքի, Փոքր Հայքի և Հայկական Կիլիկիայի:

Լինելով անմագորդ հայրենասեր տաղանդաշատ գիտնականը նաև հասարակական և քաղաքական ակնառու գործիչ էր: Նա իր պատմական և հնագիտական ուսումնասիրություններում փորձում է վեր հանել պատմական ճշմարտությունը, ազգային արժեքները ետ պահել օտար ոտնձգություններից: Նա քարոզչության և հակաքարոզչության մեծ գիտակ էր և կարողանում էր հակահարվածներ տալ հարևան ժողովուրդների կեղծարարություններին: Այդ առումով կարևորվում են Այվազյանի գրած բաց նամակները, որոնցում հեղինակը տարբեր պահանջներ էր ներկայացնում՝ ի շահ հայ ժողովրդի:

1978 թ-ից Ջոն Կիրակոսյանի առաջարկով, տասը տարի շարունակ նա ղեկավարել է «Ղարաբաղ» գաղտնի կոմիտեն, որը մեծ գործ էր կատարում ազգային արժեքների պահպանման և պատմական արդարության վերականգնման ուղղությամբ: Այսօր քչերին է հայտնի, որ 1988 թ-ի փետրվարի 20-ին Երևանի Թատերական հրապարակում կայացած միտինգը գլխավորել է Ս. Այվազյանը: ԽՍՀՄ քաղաքական Ղարաբաղյան շարժմը բնորոշեց որպես կոռումպացված տարրերի շարժում և 1989 թ-ին մեծ գիտնականը ձերբակալվելով պետանվտանգության կոմի-

տեի աշխատակիցների կողմից՝ մեկ ու կես տարի անցկացրեց Մոսկվայի պետանվտանգության մեկուսարանում: Իսկ 1992 թ-ին ՀԽՍՀ գերագույն դատարանը Այվազյանին դատապարտեց ինը տարի ազատազրկման: Բանտում գիտնականը սրտի կաթված ստացավ: Այնտեղից նրան հաջողվեց դուրս գալ ավելի քան մեկ տարի անց՝ նորանկախ Հայաստանի պաշտպանության նախարար Վազգեն Մանուկյանի միջամտությամբ միայն: Ինչպես վկայում են ժամանակակիցները՝ գիտնականը եղել է Ղարաբաղյան շարժման ոգին, շարժմանն աջակցել ինչպես կարող էր:

Սուրեն Այվազյանն օժտված էր նաև գրելով շնորհքով: Մոսկվայի պետանվտանգության մեկուսարանում նա գրեց իր «Այր հայրենյաց» սովորածավալ պատմավեպը, որտեղ նկարագրված է ինչպես հայոց, այնպես էլ ողջ մարդկության 2000 տարիների պատմությունը՝ Բ.ա. 2017-ից մինչև քրիստոնեության հաստատումը: Պատկերավոր լեզվի տեր գրող է Սուրեն Այվազյանը, գրել է նաև «Զրադաշտի տիեզերքը» պատմավեպը, բանաստեղծություններ և այլ ստեղծագործություններ: Նա նաև հիմնադիր երգում էր և երգերի տեքստեր ու երաժշտություն գրում:

Սուրեն Այվազյանի ողջ ստեղծագործության մասին միանգամից անհնար է խոսել: Մեծ արժեք ունի նրա «Հնագույն Հայաստանի պատմությունից» գիրքը, որտեղ վավերական փաստերի ուսումնասիրությունների հիման վրա հեղինակը ներկայացնում է հայկական լեռնաշխարհի հնագույն մշակույթի առանձին բնագավառները: Գիտնականի վերջին գիրքը՝ «Հայաստանի և տիեզերքի իմ ընկալումները» լույս տեսավ 2008 թ-ին: Այն ներառում է մինչև այդ տպագրված և անտիպ իր բոլոր աշխատությունները:

1993 թ-ից Ս. Այվազյանը հրատարակում էր «Մեծամոր» թերթը, որտեղ գետեղում էր իր հայրենաշունչ հոդվածները, բաց նամակները, գիտության տարբեր ճյուղերին վերաբերող իր ուսումնասիրություններն ու գեղարվեստական ստեղծագործությունները: «Մեծամորի» 2009 թ-ի սեպտեմբերի համարը վերջինը եղավ և լույս տեսավ սև-սպիտակ տպագրությամբ, քանի որ մեծ գիտնականն անսպասելի հեռացավ կյանքից: Կենդանի լեզենդի մահը խոր վիշտ պատճառեց, հարազատներին ու մտերիներին և բոլոր նրանց, ովքեր ճանաչում ու գնահատում էին տաղանդաշատ գիտնականին, սկզբունքային, շիտակ, հայրենասեր ու կենսաբախ մարդուն:

Սուրեն Այվազյանը կոչված էր իրենց դարն ապրած կաղապարները ջարդելու և զարգացման նոր ուղիներ նշելու: Լինելով չորս ակադեմիաների անդամ և երկու պետական մրցանակների դափնեկիր՝ սակայն, նրա թողած ծանրակշիռ ժառանգությունն այսօր ուսումնասիրված ու ճանաչված չէ, և գիտական վաստակը գնահատված չէ՝ ինչպես գիտական ու քաղաքական շրջանակներում, այնպես էլ ժողովրդի կողմից: Նրա մի շարք տեսություններ արձագանք են գտել հիմնականում օտար գիտնականների կողմից:

Արցախը գնահատեց տարիներ շարունակ իր անկախության համար մաքառող մարտիկի վաստակը: 2010 թ-ին ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը Սուրեն Այվազյանին հետմահու շնորհեց «Երախտագիտություն մեղալ»՝ Արցախի ազատագրությանը մատուցած իր մեծ ծառայության համար:

Սուրեն Այվազյանի մտերիներն ու համախոհները տարբեր միջոցառումներ են կազմակերպում՝ հանրությանը ճանաչել տալու արտասովոր գիտնականի և հայոց քաղաքակրթության անաղարտության համար պայքարող անխնայ գործի վաստակը: Նրանք հավատացած են, որ ապագայի գիտնականի ծամը կգա, քանզի մեծ մտքերն ու տեսությունները միանգամից անհնար է արժևորել:

Սարինե ՎԱՆՅԱՆ

150 24ԱՐԹՆՈՑ ԱՆՎԱՆ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

դնում են դրա գտնվելու վայրի անունով, և այդ տրամաբանությամբ մեր օղանավակայանը պետք է կրեր Փարաբաղ, Արգավանդ կամ Արբակ անուններից մեկը: Սակայն Դեմիրճյանը հակված էր անվանափոխելու օղանավակայանը 24Արթնոց, քանի որ մյուս 3 անունները հայկական չէին: Կարողավոլ 2որի Բալայանի հուշերը՝ տեսնում ենք, թե Մոսկվան ինչպես էր փորձում խցընդոտել ու չեղոցել, որ օղանավակայանն ունենա «24Արթնոց» անվանումը: «ԽՍՀՄ ԿԿ-ի համապատասխան բաժինը անհամաձայնություն էր արտահայտել Հայաստանի օղանավակայանը «24Արթնոց» անվանելու որոշմանը, որից, ըստ Միխայիլ Սուլովի, «տերտերականության» հոտ էր փչում: Ի դեպ, հարցը հասել էր մինչև Սուլովին, որն էլ զանգահարել էր Կարեն Դեմիրճյանին:

Հայաստանի կոմկուսի առաջին քարտուղարի համար անսպասելի չէր Մոսկվայի նման արձագանքը և նա Սուլովին պատաս-

խանել էր. «Քարոզչական նպատակներով մենք պատերազմ ենք հայտարարել կոսմոպոլիտիզմի դեմ: Եվ իհարկե, չի կարելի այսուհետ էլ հանդուրժել, որ Երևանյան օղանավակայանը կոչվի այնպիսի կոսմոպոլիտական անվամբ, ինչպիսին «Արևմտյանն» է: Դրա համար էլ որոշեցինք այն փոխարինել «24Արթնոց» ուրախ անունով»:

– Իսկ ի՞նչ է նշանակում այդ բառը, – ոչ առանց նենգամտության հարցնում է Սուլովը:

– Նշանակում է «ուրախ», «զվարթ», «առույգ»:

Իսկ Կարեն Դեմիրճյանն, իհարկե, գիտեր 24Արթնոց բառի իրական նշանակությունը (տե՛ս «Կարեն Դեմիրճյան», 2որի Բալայանի հուշերը, 2000 թ., «Հայագիտական»):

Դե այսքանից հետո ո՞նց կարելի է չսիրահարվել 24Արթնոց անվանը:

Խաժակ ԴՐԱՄՓՅԱՆ

Սոսե Մայրիկ. կին ով 8 ժամ անընդմեջ դիմադրություն է ցույց տվել թշնամուն՝ դրսևորելով մեծ խիզախություն

Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության էջերում հայրուկային շարժումը կարևորագույն տեղ է զբաղեցնում:


Այդ շարժման ականավոր ներկայացուցիչներից էին Աղբյուր Մերոբը (Մերոբ Վարդանյան), Հրայրը, Անդրանիկը, Գևորգ Չաուշը և այլք: Աղբյուր Մերոբը, սակայն, միայնակ չէր կռվում թշնամու դեմ, այլ կնոջ հերոսուհի Սոսեի հետ:

1899 թվականին, երբ Մերոբը հայ դավաճան Ավելի կողմից թունավորվել և մատնությամբ շրջապատվել է թուրք ցեղապետ, Բշարե Ռախիլի զինվորների կողմից, կնոջ Սոսեի աջակցությամբ 8 ժամ անընդմեջ կռվել է:

Այն բանից հետո, երբ թշնամու գնդակը վերջ է դրել Մերոբի կյանքին, Սոսեն վերցրել է նրա գեները և շարունակել է կռվել մինչև վերջ նույնիսկ այն բանից հետո, երբ իր աչքի առաջ թշնամու գնդակից ընկել է անդրանիկ զավակը՝ 18-ամյա Հակոբը, նաև Մերոբի եղբայրները՝ Զաքարյան ու Մխիթ:

Սոսեն, արցունքները կույ տալով, շարունակել է կռիվ տալ թշնամու հետ, մինչև ծանր վիրավորվել է:

Երբ Ալի փաշայի զինվորները փորձել են



վիրավոր Սոսեին կյանքից զրկել, թուրք հրամանատարը, զարմացած հայ կնոջ հերոսությունից, արգելել է ասելով.

«Այդ կինը իսկական դյուցազուն է»: Նա նույնիսկ կառավարության ծախսերով բուժել է տվել նրա վերքերն ու նետել Բաղեշի բանտը:

Բանտից ազատվելուց հետո Սոսեն այցելել է ամուսնու գերեզմանին, չի հեռացել երկրից, մնացել ու ապրել է Վանում: Նա հաճախ է կրկնել հետևյալ խոսքերը.


«Ինչպե՞ս այստեղ թողնեմ իմ Մերոբի որդի գերեզմանը... Այն ինչպե՞ս թողնեմ մեր թշնամու ձեռքում»:



Սոսե Մայրիկը և Դրաստամատ Կանայանը՝ Դրոս: Կահիրե, 1947 թ.:

ՆԱԽԻՋԵՒԱՆԸ, ԿԱՐՍ-ԱՐԴԱՅԱՆԸ ԵՒ ԱՐԱՐԱՏԸ ՊԵՏՔ Ե ՎԵՐԱԴԱՐՁՎԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Lragir.am-ը գրում է.



1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում կնքվեց ռուս-թուրքական պայմանագիր գաղտնի արձանագրություններով՝ հայկական պետականության ոչնչացման եւ հայկական տարածքները բաժանելու մասին: Ռուս-թուրքական ուժերը 1921-1923 թթ. համատեղ շարունակեցին ցեղասպանությունը Արեւելյան Հայաստանում, սպանվեց 300 հազար հայ, 500 հազար հայեր տեղահանվեցին հիմնականում Ռուսաստան: Այդ պայմանագրերով Թուրքիային անցան Կարսը, Արդահանը եւ Մուրմալուն՝ Արարատ լեռով, որի դիմաց Վրաստանը ստացավ Բաթումը, Նախիջևանը անցավ Ադրբեջանին:

1921 թ. ռուս-թուրքական Մոսկվայի ու Կարսի պայմանագրերը չկան ՄԱԿ-ի միջազգային պայմանագրերի ռեեստրում:

Հայաստանի քաղաքական լիզան հանդես է եկել հայտարարությամբ, որում խոսվում է նաեւ ստորագրահավաքի ու բողոքի ակցիաների մասին՝ պայմանագրի կասեցման պահանջով: Հայ-

տարարություն են տարածել նաեւ 4 կուսակցություններ: Իսկ ընդհանուր առմամբ, Ռուսաստանում ու Հայաստանում այս թեմայի վրա յուրատեսակ տաքու է դրված, չհաշված հատուկ նշան ՋԼՄ-ների ու հանրային-քաղաքական խմբերի ու փորձագետների, այս մասին ոչ ոք չի խոսում: Թեեւ, Արցախի խնդիրը եւ Հայաստանի ներկայիս տնտեսական, անվտանգային, լոգիստիկ խոցելի իրավիճակը հենց այդ պայմանագրերի ուղիղ հետեւանքն է:

Փաստաթղթային բազմաթիվ վկայություններ կան, որ Ռուսաստանը ստիպված չէր նման նվիրատվություններ կատարել թուրքերին, ինչպես պնդում են ռուսաստանցի եւ հայաստանցի որոշ պատմաբաններ ու փորձագետներ: Ռուսներն այսօր լիովին քաղում են իրենց այդ հանցավոր գործարքի պտուղները Սիրիայում եւ միջազգային այլ իրավիճակներում, թուրքերից ստանալով արդեն Ռուսաստանը ներսից պայթեցնելու սպառնալիքը: Դա լիովին իրական է հայկական սուբյեկտությունը ոչ միայն շրջանում, այլեւ Ռուսաստանում վերացնելու մոսկովյան քաղաքականության արդյունքում:

Ռուսական պետականության ապագան կախված է Հայաստանից, եւ ի տարբերություն հայաստանյան լայն շրջանակների, դա սկսել են հասկանալ նաեւ Ռուսաստանում: Սիրիայի հարցում մարտի 5-ի Պուտին-Էրդողան հանդիպումից առաջ հայտնի փորձագետ Ստանիսլավ Տարասովը գրում էր, որ Պուտինը Լենինը չէ, իսկ Էրդողանը՝ Աթաթյուրքը: Թերեւս նկատի ունեն, որ Մոսկվան Սիրիայում չի գնա նույն գործարքին, ինչ 100 տարի առաջ Հայաստանում: Միեւնույն ժամանակ, նա նշում է, որ Թուրքիան ու Ադրբեջանը, չնայած ռուսական աջակցությանը, քաղաքական ու այլ հարցերում թիկունքից հարվածում են Ռուսաստանին: Տարասովը նշում է նաեւ, որ Ռուսաստանը լուրջ հաղթաթղթեր ունի Թուրքիայի ու Ադրբեջանի դեմ, եւ ժամանակն է բացել դրանք:

Մոսկվայի ու Կարսի պայմանագրերը հենց այդ հաղթաթղթերն են, եւ Մոսկվան կարող է ուղղել իր անցյալի սխալները, որոնք կարող են Ռուսաստանի փլուզման պատճառ դառնալ:

Lragir.am

УЧИТЬСЯ У ВСЕХ И КАЖДОГО

За всю историю своего существования Московский вертолетный завод им. М. Л. Миля дал Отечеству целую плеяду замечательных конструкторов и летчиков. Среди них имя Гургена Рубеновича КАРАПЕТЯНА занимает особое место. По праву его можно назвать «крестным отцом» милевских вертолетов. Как заботливый родитель, который терпеливо поддерживает своего ребенка, делающего первые шаги, он ставил на крыло новые детища ОКБ им. М. Л. Миля. Предлагаем вашему вниманию интервью с Героем Советского Союза, заслуженным летчиком-испытателем старшим лейтенантом запаса Г. Р. Карапетяном.



– Гурген Рубенович, у вас очень интересная судьба. Говоря о вашей жизни, будет оправдано употребление качеств в превосходной степени: чемпион СССР по вертолетному спорту, первым в России выполнил петлю Нестерова на боевом вертолете Ми-28, установил 10 авиационных рекордов, вам присвоено звание Героя Советского Союза... И это далеко не все. На первый взгляд, может показаться, что вы – избранник судьбы. В то же время заслуженные награды и звания подтверждают, какой силой воли, мужеством и трудолюбием вы обладаете. Расскажите, пожалуйста, в чем секрет успехов в вашей жизни, какое влияние на нее оказали люди, окружавшие вас.

– Мне никогда не приходилось давать оценку своей жизни, до тех пор пока однажды, во время разговора с заслуженным летчиком-испытателем Виктором Георгиевичем Пугачевым, не получил от него шуточный упрек в излишней скромности. Я задумался, перечитал свой наградной лист и обнаружил довольно интересные факты, связанные с моей биографией.

Во время испытаний по исследованию изгибно-крутильного флаттера на вертолете Ми-1 оказалось, что я единственный в мире летчик, 21 раз в полете выполнивший режим выхода во флаттер. [Флаттер несущего винта вертолета – одно из опаснейших явлений аэроупругости, приводящее к разрушению. – Прим. автора.]

При испытаниях несущего винта вертолета Ми-28 на летающей лаборатории Ми-24 впервые было получено ранее не встречавшееся явление хордового флаттера. Мне также удалось преодолеть эффект флаттера и благополучно выполнить посадку. В мире было зафиксировано три случая хордового флаттера: на винтокрыле «Спееппе» американской компании Цэскпееа1, на вертолете Ми-34 и на летающей лаборатории Ми-24 с несущим винтом вертолета Ми-28. Первые два случая завершились трагически.

В 1974 году было выполнено приводнение на море на вертолете Ми-14 в режиме авторотации. В нашей стране никто до и после меня такой посадки больше не выполнял.

Мне довелось стать первым летчиком-испытателем, который вывел из неуправляемого вращения [вертолетного штопора] вертолет Ми-24. Этот опыт впоследствии стал предметом подробного изучения.

В 1980 году при испытании тяжелого вертолета Ми-26 мы совершили посадку на авторотации с выключенными двигателями с полетной массой 50 тонн. Это был первый случай в мировой вертолетной практике.

